

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

1871

ՅՈՒՆԿԱՐ

10 3 6 4 2

9 7 5 3 1

46 2
Գա-Եր

ՅԷ. Վ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆՎԱՐ 1871

ԹԻՒ 1

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Նոյստի. — Գաղաթախ, 1870. — Ճշմարտութեան (Հայ Գրաս. Ը. —
Աշխատք, 1870. — Հին Սահմանադրութեան. — Վերադնեալ Սահման
Նադրութեան. — Ինչո՞ւ համար նշանադրուի չիտ. — Ի վնաս :

Ն Պ Ա Տ Ա Կ

Այլ և այլ տեղ ու ժամանակ լրագիր մը հրաւ
տարակերու ընդունայն փորձ փորձելէն՝ և ուրիշ թեր-
թերու մէջ մեր ոյժը չափելէն ետեւ՝ վերջապէս մեր խոր-
հրդիկն մարմին տալու կ'առաջարկեն : Խմբագրութեան ծաւ-
նըր պարտիքն ու թշուառութիւնները, ժամանակիս նոր

նոր պիտոյքն ու պահանջութիւնները կ'պարտաւորեն մեզ յանդիմութիւն անուանել ինչ որ ոմանց սովորական բան մը կ'երևի: Անվահերութիւնը ստեպ անդիտութիւն կ'ենթադրէ, վարանումը՝ դատողութիւն:

Իրաւի մեզի ալ ատեն մը դիւրին և զուարճալի գործ մը կ'ընէր թերթ հրատարակել, ժողովրդեան հետ խօսիլ, նոր նոր տեսիլներ յայտնել, հասարակաց կարծիքն ուղղել, Ազգին իրաւունքը պաշտպանել, անոր թշնամիները նշաւակել, եղծութիւններն արմատէն խլել, հայրենիք, ազատութիւն, հաւասարութիւն հռչակել, մէկ խօսքով՝ Ազգին վերանորոգիչը լինել. սակայն երբ տարիներ սահելով տխուր փորձառութիւնն ու բռնութիւնը, անողոք իրականութեան հետ եկան մեր սրտաղին զգացմանց դէմ զարնւեցան, այն ատեն կանկ առինք, մեր զօրութիւնը չափեցինք, և առաջ որչափ դիմագրաւ և գիտուն, վերջէն նոյնքան վահերոտ և տգէտ գտանք ինքզինքնիս:

Բայց միթէ՞ այժմ պարագաներն ու մենք փոխեցանք, միթէ՞ աւելի ձեռնհաս ենք պաշտօնի մ'որուն ծանրութիւնը կ'զգանք, միթէ՞ այժմ խմբագրի մ'ապագան աւելի պայծառ ու անհաշով, տպագրական ազատութիւնը աւելի լիակատար է. ոչ բոլորովին. միայն դիտելով որ հայ ժողովուրդն ամէն գոյն թերթերու ներողամիտ աչք կ'նայի, ընթերցասիրութեան՝ թէև անընտրող՝ եռանդ մը կ'սիրէ իր մէջ, բարենպատակ խմբագիրներու քաջալեր կ'կարգայ, և վերջապէս տպագրական ազատութեան արժէքը փոքր 'ի շատէ կ'ճանչէ, խրախոյս առինք ընդհանուր շարժման մերովսանն գործակից գտնւիլ ԱՐՆԻԵԼԵԱՆ ՄԵՄՈՒԼԸ հրատարակելով:

Այս միջոցիս՝ մանաւանդ Պօլիս՝ շատ օրագիր, այլ քիչ հանդէս ունինք, և այս անպատեհութիւն մ'է։ Աթէ հեղինակի մ'ըսածին պէս՝ լրագիր մը ծաւալէ, հանդէս մը հրահանգիչ է, հանդէսներու շատութեան պէտքը կ'զգանք մեր Ազգին նկատմամբ քան թէ օրագիրներու։ Բանիբուն և կշիռ ունեցող օրագիր մը լաւ հասկնալու համար պէտք է բաւական մեծիակ համբար մ'ունենալ՝ Կաղապար, պարսկական, արաբական, ինքնապատկան և այլն գիտելեաց։ Ընդհանուր ընթերցողն այս գիտելիքը չունի, և օրական թերթ մը չէ կարող զանոնք հաղորդել։ Վասն զի ոչ միայն իր պաշտօնէն դուրս է, այլ և իր ժամանակն ու ջրջանը չեն ներեր։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ նպատակը պիտի լինի այս նիւթերու վրայ գրել ըստ կարողութեան, և եթէ հնար է՝ իր յօդուածներն ոչ միայն օգտակար, այլ աստիճանական բերել ամենուն։ Ուստի նորածին թերթերու սովորութեան հակառակ՝ ոչ մեծամեծս կ'իտոյտանայ, և ոչ իր սկզբանց դաւանութիւնը բարձրաձայն կ'հռչակէ, միայն իր սկզբունքը դրածներուն մէջ ակն յայտնի, և՛ խոստմունքի տեղ՝ արդիւնք ցոյց տալու պիտի ջանայ, աներկմիտ լինելով որ մերայինք ալ այս ձեռնարկութեան իրենց իրական աջակցութիւնն ու քաջալերութիւնը չեն զանար։

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

1870

Չկայ դար մ'որ ազգերու կենաց մէջ այնքան շփոթ ու փոփոխութիւն բերած լինի որչափ այս դարս, որ թերեւս ուրիշ շատ

բաներու ծնունդ պիտի տայ, և ոչ տարի մ'որ այնչափ ահեղ և հսկայական պատերազմ տեսած լինի որչափ 1870 տարին :

Հին բնակալներու դարերը վերադարձան արդեօք . բարոյական աշխարհն ալ՝ երկրագործիս պէս թաւալելով՝ յոռի շրջան մը կ'կատարէ արդեօք, մերթ դիշեր՝ մերթ արև ցոյց տալով, թէ ոչ նախախնամական անխմանալի կարգի մը կ'հպատակի : Դեռ հինգ վեց ամիս յառաջ՝ ճարպասան լեզուներ, վսեմ հոգիներ՝ աշխարհիս ոլորտը քաղաքակրթութեան ըրած խաղաղաւետ յաղթանակները կ'հռչակէին, համազային սիրոյ շղթաներ կ'դարբնէին, առևտրական յարաբերութիւններու ծաւալումը, ժողովրդոց վեհապետութեան սկզբունքը, մէն մի ազգի լուսաւոր խղճմանքը՝ խաղաղութեան դրաւականներ կ'սեպէին, և պատերազմի անթիւ աղէտից պատկերն իբր զաղանային գործ մը նկարագրելով՝ զայն անկարելի կ'համարէին . և ահա այսօր երկու մեծ, հզօր և երևելի ազդեր՝ արեան հեղեղներ կ'թափեն, հոյակապ ու շէն քաղաքներ քար ու քանդ կ'ընեն, ընտիր ընտիր կտրիճներ դերեզման կ'իջեցնեն, անհամար մայրեր, քոյրեր, մանկիկներ՝ այրի, որբ, անտուն կ'թողուն և համայն երկիրս սև սուգի մէջ կ'թաղեն :

Միթէ յանկարծ մարեցաւ լուսաւորութեան ջահը . ո՞ր մնացին այն մարդասէր հռետորներն որ բեմերէն սէր ու միաբանութիւն կ'քարոզէին, ո՞ր դացին այն դասերը՝ զոր պատմութիւնն ամէն օր մեզ կ'աւանդէ, ինչ եղան այն խաղաղութեան յայտարարութիւններն որոնք ամէն պաշտօնական հանդիսի, ընդունելութեան կամ այցելութեան առթիւ՝ վեհապետներն ու դեւանագէտները ժողովրդոց միտքն ու սիրտը կ'օրորէին, ո՞ր են միջնադարային դաշնադրերն՝ որոց վրայ հիմնեալ են Եւրոպայի հաւասարակշռութիւնն ու խաղաղութիւնը : Ուրեմն սուտ էին պաշտօնական ուխտերը, ուրեմն խաւար է Եւրոպայի լոյսը, կործանման հիազօր դործիներ են գիտութիւններն ու արհեստները . իսկ անոր բնակիչներն աւելի խուժիկ են և բարբարիկ քան Ափրիկէի վայրէնիները : Ուրեմն Հօպս* իրաւունք ունէր ըսելու թէ ազգերու բնական վիճակը պատերազմն է :

* Անկլեացի փիլիսոփայ, (1679) նիւթն աստուած և ինքնակալութիւնը միակ օրինաւոր իշխանութիւն գաւանեց, ժողովուրդները՝ իբր անբան հօտ կ'այր հնազանդութեան յորդորելով :

Սոյն դիտողութիւններն այնքան իրաւացի կ'ընեն որ նախորդ կռիւններուն շարժառիթը՝ կամ բռնակալի մը քմածին խորհուրդն էր, կամ փառամոլի մ'աշխարհակալութեան տենչը, կամ որ և է ներդաւորի մը շարահար նպատակը, միով բանիւ՝ մտնէր ու ազիտութիւնը ։ Իսկ հիմակ շարժառիթն ինչ է ։ Ահա երկու ազգեր, քաղաքակրթութեան հերոսներ՝ վայրի դաշտն դարձած՝ իրար փարատել կ'ճգնին, և՛ այս մալեղնութեան ժամանակ՝ չեն յիշեր որ մին՝ Տէքարդի, Ֆէնէլօնի, Մօնթէսքիէօի, Ռուսօի պէս մարդոյ աշակերտն է, միւսը՝ Քլօքսօքի, Քանդի, Հերոէրի, Հիւմպօլտի ։ Արդարեւ շատ մարդիկ այս արիւնալի և՛ ահաւոր դէպքերը դիտելով՝ որ ազգեր ու տէրութիւններ նոր՝ նոր պայմաններու պիտի ենթարկեն, ահա ու վահ կը քաշեն, երանի կ'կարգան նախնի նահապետական պարզութեան և ազիտութեան, և սա հետեւութիւնը կ'հանեն թէ՛ քաղաքակրթութիւնն աւելի արիւնաւոր չէ՛ր որքան զմարդ, վկայ՝ այս դաշտա մէջ միայն՝ Մեծն Նափոլէօնի, Խրիսի, Ամերիկայի, Իտալիայի, Սասովայի պատերազմները, և թէ ամէն անդամուն որ յառաջագէտ քայլ մ'առնու, անոր հետ ինքնաշարժ էր, որքան մ'ալ կ'հնարէ, այսինքն սոյն յառաջագիմութեան համահետ կործանման մեքենայ մը ։

Արդարեւ այս զրացման աղբիւրն ազնիւ է, սակայն արի տես որ պատմութիւնն իր արիւնացիժ երեսներով զայն կ'ստէ ։ Նոյն իսկ նահապետական կոչւած ժամանակներն ալ՝ անդու էր ժողովրդոց մէջ սոսքարը, և արդէն քաջ որոշու մը, Բէլ, Հայկայ արդարութեան աղեղէն տապաստ կ'կործանէ ։ Արեւելք՝ այս բռնակալութեան աշխարհն՝ իր բիւրաւոր գինւորներովը կանկ կաւնու Յունաստանի ազատութեան պատուարին առջև, Հռոմ՝ յարատե կռիւներէ ետեւ՝ բարբարոսներու, կամ լաւ ևս ըսեմ, վրէժխնդիր ասպատակներու առջև կ'խոնարհի, բոլոր Եւրոպաոսք կ'եղնէ Միջին դարու մէջ՝ տէրունական վայրերն ազատելու մտք և անբաւ անմեղներ տանգարամետ կ'դրէ ։ Թող կէս կրօնական կէս քաղաքական իրենաշարժ պատերազմը (1618-1648) որով Գերմանիա Աւստրիոյ լուծը կ'թօթվէ, Թող Եօնիստան, պատերազմը՝ ուր Բոլսիա Ֆրէսէրիի Բ. ի օրով՝ Ֆրանսայի և Աւստրիոյ դէմ ճակատ կ'բռնէ (1756) և առաջին տէրութիւն-

ներու կարգը կ'անցնի . թող ուրիշ շատ մը կրօնամուլութեան
կուիւներ որ եւրոպայ արիւնթաթաւ ըրին : Թամանակ մ'աւելի
անկայուն էր խաղաղութիւնը քան թէ հիմակ , քանի որ դէթ
այժմ օրինական ձեւ մը կ'ստանայ պատերազմի անհեղ պատուհա-
սին հրատարակումը , և ստէպ իրաւունքի մը պաշտպանութիւնն
ունի իրեն զրգիւ քան բունաւորի մը հաճոյքը , և այս պատճա-
ռաւ իսկ աւելի սոսկալի , աւելի բուռն կ'դառնայ ճակատամար-
տը : Այժմ երկու ինքնակալ՝ վարձկան զօքականներու հետ չեն
մաքաւիր դէմ առ դէմ , այլ ազատութեան , իրաւանց և հայ-
բենասիրութեան վահանով զինւած ազգեր կ'մենամարտին . ուստի
որքան լուսաւոր նոյնքան աւելի մեծ կ'լինի ազգի մը կատգո-
թիւնն իր իրաւունքը բռնաբարող ոտխին դէմ , վասն զի աւե-
լի խորին է իր արժանապատուութեան և իրաւանց զիտակցու-
թիւնը , և իր բոլոր մտային և նիւթական միջոցներն 'ի դործ
կ'դնէ իր դատին յաղթանակին համար :

Եւ միթէ մարդկային ազգը դատապարտեալ է միշտ պատերազ-
մելու , աւել , քանի որ մարդուս կեանքը կուի մ'է կրից , տը-
ղիտութեան և լուսաւորութեան մէջ , բնութեան քարոտներուն
դէմ՝ որ աւելի հեշտիւ կ'տապալին , քանի որ արդարութեան ,
հաւասարութեան իշխանութիւնը գեռ շատ հեռի է , ժողովրդոց
մէջ պատերազմն անսրակաս պիտի լինի . թնգանօթը պիտի գո-
ռայ միշտ՝ քանի որ բանականութեան և ազատութեան ձայնն
անլսելի մնայ , և եւրոպական պետութիւնները միջնազգային յա-
րաբերութեանց և օրինաց մնայուն կայան մը տալու չ'զիջանին՝
թէ փառամոլութենէ , թէ բռնասիրութենէ և թէ ժողովրդային
ազիտութենէ շարժեալ :

Եւ իրօք ի՞նչ է քաղքի մ'անդորրութեան և բարեկարգու-
թեան պայմանը , ամենուն կենաց , պատուոյ , ստացուածքի տապ-
հովութիւնը , արդարութեան անխտիր բաշխումը , ատեաններու
օրինասրահութիւնը : Տո՛ւր անիրաւին իրաւունք , դողին թողու-
թիւն և մարդասպանին արձակում , և իսկոյն ընկերական վի-
ճակը վեր 'ի վայր կ'տապալի : Քաղաքացիք , թէ մեծ թէ սղտիկ՝
միաբան ոտք կ'եւնեն և հոսարակաց թշնամին կ'վանեն , կ'պատ-
ժեն , վասն զի ամէնքը շահ ունին այս գործողութեան մէջ :
Ինչպէս մասնաւոր ընկերութիւն մը՝ նոյնպէս պէտք է որ տէ-

բութիւնները հանրական շահերու համերաշխաւոր լինին՝ իբր
անհատներ . երբ մին՝ սովորաբար զօրաւորը՝ տկարին մնասէ ,
հարկ է որ ամէնքը զինին և մնասարկուն պարտաւորեն իրար
յարգելու , այն ատեն միայն համազգային խաղաղութիւնը վեր-
դուլելու յանդէնող չգտնուիր : Սակայն տէրութիւններն այսպէս
չեն շարժիր . ժամանակին կամ իրենց զօրութեան բերմունքը
կ'գիտեն , մասնական դաշնադրութեամբ իրարու հետ կ'կապեն՝
կ'բարեկամանան , կ'շնթեն , բայց շատ չ'անցնիր , կրճիմ մը կը
բանան , դաշնադրերը կ'ծալեն , կ'աւրեն , կ'զինին , կ'կռուին ,
ժողովրդեան որ և է զգացումը զրգուելով իրենց օգտին կ'գոր-
ծածեն , կ'յաղթեն կամ կ'յաղթւին , երկիրներ կ'առնուն կ'տան ,
կ'տրորեն , կ'բաժնեն , և ի վերջէ՝ նոր դաշներ կ'կռեն չպա-
հելու համար . ԲՈՒԹՆ ՁՕՐՈՒԹԻՒՆԸ յաղթանակը կ'տանի ,
տկարները կ'խոնարհին , և նոր նոր դաշնակիցներ կ'մուրան
գաղտնի՝ որ պատեհ առթիւ վրէժ լուծեն : Հետեւապէս բանակ-
ներ մնացուն կ'կենան սպառազէն ամենուրեք : Ի զուր կ'ջանան
օրէնսդէտները նոր դաշնադրութեանց վրայ միջնադրային օրէնքը
և Եւրոպայի հասարակաց իրաւունքը հիմնել . հատորներ կ'գրը-
ւին , և այս ամէն գիւնական արձանագիրները , պաշտօնական
խոստումներ չեն արգիլեր որ քանի մը տարիէն Եւրոպայի այս
կամ այն մասին աշխարհադրական գիւրքը չփոխի : Արդ՝ իրաց
այս ընթացքով միթէ կարելի է յարատեւ խաղաղութիւն մը յու-
սալ , ամենեւին , այլ հարկ է որ՝ չէ թէ այս կամ այն տէրու-
թիւնն , կամ տէրութիւններ խմբովին՝ ուրիշ տէրութեան մը
չէզոքութեան , կամ դաշնադրութեան մը պահպանութեան հըս-
կեն , այլ բոլոր տէրութիւններն ամէն ազդաց պարտ ու պատ-
շաճ իրաւունքը ճանչելով խմբովին համերաշխաւոր մնան , և
Ամֆիկտիօնեան ատենին նման համազգային ժողովի մը մէջ՝
հանրական խնդիրները լուծեն , ըմբոստ տէրութիւնը զղատու-
թեան մղեն , օրինաց առջև հաւասարութիւնն ամուր պահեն ,
փոխանակ կոշտ ուժի վրայ կռիւնելու և անզօրին իրաւունքը
բռնաբարելու . ասպ թէ ոչ հարկ կ'լինի ըսել թէ շատ տէրու-
թեանց նախնական իրաւունքը խարխուլ հիմքու վրայ դրած են :

Բայց այն ատեն ինչպէս կարելի էր Խաղաղ պաշտակաւ
մինչև վերականգնումը Մէթէրնիի դրութեան հաւառակ՝ որ

Իսթալիաի աշխարհագրական էութիւնը կ'ուրանար, ինչպէս Նէֆաւտաւանը կտոր կտոր ընել և ուտել, ինչպէս Թուրքիոյ ամբողջութեան ֆնասելու փորձ փորձել, ինչպէս Տանիմարպաի մէկ մասը դրուել, ինչպէս քստմնելի քինստութեան ուղով Քրանսայի արդի գիւցաղնական ճիգը չէղոք աչօք նկատել, ինչպէս Ներսէս կաթողիկոսի տըւած խոստումները դոժել, ինչպէս . . . : Եւ ահա այս պատճառաւ արդի դաշնագրութիւնները բուն իսկ խաղաղութեան երաշխաւորութիւններ չեն, այլ Գափուրի խօսքն ընդարձակելով՝ քիչ շատ երկարատեւ զինադուլներ կ'անուանենք, որ բարուրանքով մը կ'վերնան, դաշնագրերը կ'պատուին, և իբր շրջանաւոր ախտի մը, ազգեր 'ի սուր և 'ի հուր կ'մատնւին :

Սակայն դարձեալ պէտք չէ յուսահատիլ մարդկային կատարելութենէն (perfectibilité) որ միշտ գէպ 'ի խաղաղ և հաշտաբար նպատակի մը կ'նկրտի, պէտք չէ մոռնալ խիստ էական իրողութիւն մ'որ ազգերու էութեան մէջ լռելեայն կ'կատարի, պատեխաղմներու պատահարները կ'նուաղէ, և ժողովուրդներն իրենց ճակատագրին տիրանալու գրգռելով՝ ապագային մէջ աւելի երկարատեւ և թերեւս անվերջ խաղաղութեան զրաւականներ կ'պատրաստէ :



ԱՆԿԼԻԱ՝ աղնուապետութեան և առանձնաշնորհութեան այս երկիրը՝ իր վաճառականութեան և ազատասէր զաւակներուն շնորհիւ՝ քայլ առ քայլ գէպ 'ի հաւասարութիւն դիմելով՝ ամէն տարի յաղթանակ մը կ'տանի հին ու մին եղծումներու գէմ՝ և էտ . Պըրքի դրութեան համեմատ՝ տառնց բուռն միջոցներու՝ իր Սահմանագրութեան զղալի փոփոխութիւններ կ'բերէ :

Ընտրողական իրաւանց անձանձիր տխրեան՝ լօքս Ռըսէլի Պ. Կլատսթըն յաջորդելով 1870 տարւոյն մէջ այլ և այլ նշանաւոր հիմնադրեր կ'առաջարկին Բարլմէնդին, շատերը կ'ընդունւին և Մեծն Բրիտանիոյ օրէնք կ'դառնան : Հոգային ռէնէ, Իքլանդայի եկեղեցւոյ ռէնէ, նախնական դաստիարակութեան ռէնէ, Բադդի Կուէրիութեան ռէնէ, մեծամեծ հարուածներ կ'տան հին դրութեան և ժողովրդեան իրաւունքը կ'ընդլայնեն : Իրլանդա տա, այս հէք և նօթի երկիրը՝ որ անդադար ապստամբութեան

մէջ ապաւէն կ'փնտռէր, որ՝ Ֆէնիանէր, սցոխնքն՝ կառավարութեան գէմ դաւաճաններ հանելով՝ ահա ու սարսափ կ'աղբէր, վերջացէս կ'հանդարտի, դեղացի և մշակ կարող պիտի լինին այսուհետեւ երբեքէր դառնալ՝ հողացն՝ բէնէն ուժովը, մինչդեռ առաջ լոկ ստրուկ վարձկաններ էին, և կաշուածառէքին, լօրտին կամ առազանիւն հաճոյիցը խաղալիկ : Երլանտաի եկեղեցոյ փարթամ ինչքը, առաստկան դրութեան բեկորները, սրայմանեալ ժամանակէ մ'ետքը պիտի դադրին և կրօնական իշխանները պիտի անհետին : Գաստիարակութիւնն՝ որ ցարդ թոյլ ու անխնամ էր ստորին դասու մանկուոյն մէջ՝ պարսաւորակն կ'դառնայ. առ մէն նահանգ, քաղաք, աւան իրենց յատուկ յատուկ վարժոցները պիտի ունենան, որոնք կամուռը կամ բռնի տրօք պիտի մատակարարին և կեդրոնական գանձն աղքատիկ վիճակներու պիտի նպաստէ, այնպէս որ Անկլիոյ բարոյական և մտաւոր մշակութեան տաղիճանը պիտի բարձրանայ, և նոր սերունդն այնքան կիրթ և ուսեալ պիտի լինի որչափ են այժմ Գերմանիոյ ժողովուրդները : Եթէ մէկն այս օրէնքին անասաւէ՝ տէրութիւնը բուռն զօրութիւն պիտի գործածէ, որպէս զի ամէն ծնողք անխտիր իրենց որդիքը կրթելու պարտաւորին : Այս կենսական խնդրոյն առթիւ սքանչելի տեսարան մը կ'ընծայի. տկումքներ, դպրոցական մասնաժողովներ կ'կազմին օրէնքին գործադրութիւնը գիւրացնելու նպատակաւ, և այս պարագայիս մէջ նշանաւոր գէպքը ոչ միայն Գալանի Կալէն-Բեան կլերաութիւնն է, որ անկից առաջ յայտնի էր, այլ և անուանի քաղաքագէտներ ու մատենագիրներ պարծանք կ'համարին անդամակցութեան հետամուտ կանչներու, և մինչև անդամ կիներն, ինչպէս օրիորդ Ալբրէթ Բօլիշը՝ 48000 քուէով, և օրիորդ Տէվիս՝ իր սեռին իբրտանց անվիհէր փաստաբանն՝ անդամ կ'ընտրուին, ընտրութիւն մ'որ նոր քայլ մ'է կիներն ալ ընտրող և ընտրելի ընելու և Բարլիմէնդի մէջ աթոռ մ'ունենալու, ինչպէս որ Նիւակէթ երեւոյթանը՝ մայիսին՝ այս մտօք հիմնադիր մ'առաջարկեց թէ՛ Բայց մերժեցաւ՝ զալ տարի նորէն երևելու սրայմանա :

Սակայն ՀԵԼՎԷՏԻԱ (Ջուիցերի) աւելի առաջ կ'քալէ այս խնդիրներուն մէջ : Կանանց՝ բարձր գիտութիւններու հաղորդ լիներու իրաւունքը կ'ճանչէ և անոնց վարժապետութեան և բժշկու-

Թեան վկայադիր կ'տայ . կրթութեան զործը կղերին ազդեցու-
թեանէ աղատելու կ'ճդնի , հոգևոր իշխանութիւնը քաղաքակա-
նէն կ'զատէ , և այս փոքրիկ Հասարակապետութիւնը՝ ոչ միայն
վեհ տարագիրներու ապաւէնը՝ այլ և ազատական սկզբանց վա-
ռարանն՝ և աշխատասիրութեան , մարդասիրութեան և ժողկա-
լութեան հանգէս կ' դառնայ բոլոր Եւրոպայի : Այս երեւելի ի-
րողութիւններու մօտ՝ ՚ի հարկէ աննշան կ'անցնին , անկլիացի ու-
ղեւորներու արշաւանքն ու սպանութիւնն ՚ի Մարաթօն՝ երբեմն
Միլիթարտի յաղթութեան դաշտն ու Պարսից զերեզմանը , այժմ
աւաղակաց զուբ մը : Այս եղերական զործը բոլոր անկլիացոց
զայրոյթը կ'զրդուէ՝ և հանած վրէժխնդրութեան աղաղակները
Յունաստանի դահլճին անկումն ու դատական քննութիւն մը կը
բերեն որ ցարդ տարտամ կ'մնայ : Լօրտ Բլաթէնտօնի՝ ազատա-
սէր քաղաքագէտին , լօրտ Բալմէստրօնի զործակցին մահը՝ այն
որ Խրիմի պատերազմին ժամանակ պաշտօնական բանակցութեանց
մէջ երեւելի դեր մ'ունեցած էր :

Այն ինչ Անկլիա և Հելվէտիա ազատութեան և բարօրութեան
սահմաններն ընդարձակելու կ'շնանն՝ ՀՌՈՄ՝ արդէն լուսաւո-
թեան դէմ արձկած անհուր շանթերը բաւական չհամարելով՝
կրօնական իբր տիեզերական ժողով մը կ'գումարէ Ս . Պապին
անսխալականութեան սկզբունքը նուիրագործելու համար : Աշ-
խարհիս շատ կողմերէն եպիսկոպոսներ կ'վազեն կ'հասնին ՚ի Վա-
տիկան : Երեւելի վարդապետներ կ'բողոքեն այս մոլար ու անհե-
թեթ վարդապետութեան դէմ , ինչպէս Տօլլինճէր , Կրադրի ,
Տարսլոյ , Ստրօմէյէր , որոյմէ վար չին մնար նաև քանի մը
Միլիթարեան արանդապահ հայերը՝ որ Գեր . Հասունեանի յԱ-
րեւելս անկումը կ'պատրաստեն : Բայց ճիշտ այն միջոցին որ Ս .
Պապին աշխարհային իշխանութիւնը քայքայեր , իր խարխուլ ա-
թուր Քրանստի սուրհներու և թնդանօթներու կռթներ էր , ճիշտ
այն պահուն որ անսխալականութեան խօսքը միայն բոլոր լուսա-
մատ Եւրոպայի ծիծաղն ու արհամարհանքը կ'շարժէր , ճիշտ այն
միջոցին որ Տարիւ կոմնը Քրանստէն , Պէօսթ Աւատրիաէն՝ ու-
րուն վերականգնիչն է , ազդ կ'առնուն Ս . Պապին որ յոռի
շրջանի մը մէջ կ'դառնի , և թէ իւրաքանչիւրն իր պետութեան
իրաւունքն անսխալականութեան սկզբունքին չպիտի զոհեն եր-

բէք (ինչպէս որ այս վերջինն ըրաւ կրօնական դաշնադրութիւնն (concordat) աւրելով), համադրամար ժողովին մեծամասնութիւնը, ճիգովի խառարին և քրիստոսընդդէմ ոգին անսաստ կ'մնայ, և ինչ որ նախկին պապական տիրապետութեան օրովը՝ քանի մ'եկեղեցական ժողովներ չկրցան լուծել, վարձկան և շլափաւ կղերականներ կ'վճռեն և յուլիսի 13էն Ս. Պապին անսխալականութեան դաւանութիւնը 450 քուէով կ'վաւերեն, մինչ 62 վարդապետ պայմանաւ կ'ընդունին զայն, և 88 վարդապետ ալ հակառակ կ'կանգնին ցվերջ:

Ինչպէս երբեմն Բուէ Ֆրանսաի օրէնսդրական ժողովին բեմէն՝ նոյնպէս և Ս. Պապը Ս. Պօղոսի դմբէթէն «Լաբէֆ» թողուլ էրէէ՝ որ Հռոմ ԻՏԱԼԻԱՅ մայրաքաղաքը լինի զոչելու ատեն՝ Վիլթօր Էմմանուէլ արդի պատերազմէն օդուտ քաղելով՝ իր զօրքերը Հռոմի սահմանները կ'քշէ և կայսերական պարգաւն ու Ս. Պապին անխալախոյն իրապէս սխալ և սուտ կ'հանէ: Ֆրանսա կ'ստիպուի իր պահնորդ գունդերը Հռոմէն հանել, Ս. Պապն Իտալիոյ կառավարութեան շուքին տակ թողուլ՝ և սեպտեմբերի դաշնադրութեան վստահիլ. սակայն նոյն իսկ Ֆրանսաի նախկին կայսերական կառավարութիւնը Մանթանայի կռուին մէջ՝ նոյն դաշնադիրը՝ պատուած լինելուն՝ իտալական զօրքերը՝ քանի մը թնդանօթ արձակելէն ետեւ՝ Հռոմ կ'մտնեն, թէև՝ անսխալականութեան սկզբունքին համեմատ՝ Ս. Պապն՝ Անթօնէլլիի դրդմամբ՝ դեռ կ'սնդէ թէ Իտալացիք Հռոմ մտած չեն, և միւս կողմէն ճարը հասած՝ նոյն իսկ հերետիկոս տէրութիւններու բողոք կ'ուղղէ և անոնց պաշտպանութիւնը կ'ինոյրէ:

Այժմեան պատերազմին փոթորիկներուն ատեն՝ զրեթէ անտես կ'անցնի իրողութիւն մ'ալ որ ՍՊԱՆԻԱՅ դահն Իտալիոյ թաղաւորին Ամէտէ որդւոյն բաժին կ'հանէ: Սպանիական դահը՝ Իզապէլ թաղուհւոյն թաւալլոյր զալէն հեռէ՝ թափուր կ'մնար — ոչ Մօնթանսիէի գութը՝ ոչ թաղաղուրի թաղուհւոյն որդին՝ Տօն Ալֆօնսը, ոչ Տօն Գարլօսը՝ կ'ընդունէր իբր դահընկալ — այլ անպառաճաւ օտար իշխան մը կ'փնտէր ներքին կուսակցութիւններուն պահանջմանց վերջ տալու համար, փոխանակ՝ դահ ու թաղ խորտակելով՝ հասարակապետութիւն հրատարակելու, որուն հասուն կերեւէր ժողովուրդը, քանի որ երկարատե ան

իշխանութեան ժամանակ կարծւածէն նուազ ազմուկ ու շփոթ
հանեց : Խնամակալն Սէրբանօ , ալեորն Էսքարթէրօ , որ թագ
ու բարձ մեթեց , յեղյեղուին Բրիմ , ահա այս եռապետները կ'վա-
րէին կառավարութեան սանձը և արքունեաց դռները կ'զարնէին
դատարկ թագաւոր մը մուրալու : Հօհէնցոլէրնի իշխանին՝ սրահ
մը հետամուտ կանդնելով՝ Ֆրանսա ու Գերմանիա կ'ընկին ,
և այս պատրուակը կ'զանեն ահեղ պատերազմ մը հետ , մինչեւ
Սպանիոյ վրայ իշխելու տխուր վիճակը Աստի գլխին կ'իյնէր :
Սակայն երբ նորընտիր թագաւորը դէպ 'ի Սպանիա կ'ղկմէր ,
Բրիմ՝ գաւաճաններէ առած վէրքէն հոգին կ'փչէր՝ և թեքա
քաղաքական ճանի յանցանք մը կ'քառէր : Այս սղալի գէպքը
դահակալութեան հանդիսին վրայ սե .քող մը կ'ծածկէ և կուսակ-
ցութեանց ասպաղայ իւրաքանչեւ չարագուշակ նշան մը կ'երևի :

Ո՞ր քաղաքագէտը կարող էր գուշակել որ արդի պատերազ-
մին կայծը Սպանիայէն պիտի թռի լայ և երկու հօր ու լուսաւոր
ազգեր՝ Ֆրանսան ու Գերմանիան պիտի բորբոքէ . սակայն
այնքան անկայուն էր եւրոպական հաւասարակշռութեան դրու-
թիւնն , այնքան բռնազբօսիկ և քմածին հիմներու վրայ զետեղւեր ,
փլէր ու նորէն կանխներ էր , այնքան դիւրին է զօրաւոր տէ-
րութեան մը ընդհանուր քաղաքականութեան անխն ըստ հաճոյս
դարձնել և տկարին ներքին գործերուն միջամտիլ , որ այսպիսի
անակնկալ շանթեր պէտք չէ որ հիացնեն ժողովուրդները : Եթէ
Ֆրանսա , կ'իմանամ՝ նախորդ կայսերականը , թողոր Սպանիոյ
որ ինքն իր բազմը վճռէր , եթէ անգաղար քարոտն մը չ'նե-
տէր հասարակապետութեան մը հաստատութեան , կամ Մօնթան-
սիէի դահակալութեան գէմ , ո՞ր դիտէ , թեքա Հօհէնցոլէրնի մը
մասնով չէր լինէր և աշխարհիս ահաւոր մէկ պատերազմին պա-
տուակ մը չէր տրուեր . պատրուակ մ'էր իրաւի , ըստ որում՝
Սատովաի պատերազմէն և գերմանական միութեան գործէն վեր՝
Ֆրանսա խեթիկ կ'ղկուէր Հռենոսէն անդին անցած դարձած բնա-
կան իրողութիւններն և իրեն մօտ յանկարծ ուժեղ զրացի մը
կանխելուն կ'զժկամակէր : Բայց միւթէ իրաւունք ունէր , Ֆրան-
սա՝ եւրոպական հաւասարակշռութեան իբր խորիսխ համարող
1815ի դաշնադրութիւններու գէմ շարժելէն , Սովորան կամա-
ցուկ մը կորդելէն ետեւ՝ ինչ իրաւամբ կրնար դանդաղիլ և Գեր

մանիաի միութիւնն արտակեցրոն և վտանգալի դնելով՝ Սաքո-
վաի գէտքին իր ակամայ ակնառութեան իբր վարձք՝ Պիղմար-
դէն հոր պատառ մը , կամ՝ սահմաններու ուղղութիւն մը պա-
հանջել : Իսկ Պիղմարդ , այս կորուստիս , հնարագէտ , յանգուզն
գլուխը , նախորէօնեան պահանջումներուն վրայ մոխիր կ' ըտպէր ,
և քաջ գիտնալով որ թերեւ հովէ մ' օրին մէկը կրնար թաղուն
կրակն արծարծիլ՝ ամէն արկածից դէմ լուրեպն իր պատրաս-
տութիւնները կ' տեսներ , մինչդեռ Քրանսա՝ իր նախկին փառաց
զափնինքնով և կայսերական շուայտ ու ջլատիչ իշխանութենէ
արբշտ՝ թոյլ ու անփոյթ կ' կենար , և իր քսանամնի սարկու-
թիւնն , ապիկարութիւնը և անձնական իշխանութեան լուծը ժո-
ղովրդային 7 միեծն քուէով մը (plebiscite) կ' վաւերէր կուբորէն :

Եկաւ հասաւ այն օրն երբ Հօհէնցոյէրնի իշխանին հետամուտ-
թիւնը հեռագիրը բերաւ Քրանսա . քաղաքագէտ ու գեսպան ի-
րար անցան և այս հետամուտեան մէջ Պիսմարդի մասն՝ ու
հեռուն՝ Շարլ Ե . ին պետութեան վերականգնութիւնը նշմարեցին :
Անմիջապէս Նախորէօն կայսեր կառավարութիւնը կ' պահանջէ որ
Բրուսիոյ թագաւորն չ[ժողով որ իր Լէոբուլա Հօհէնցոյէրն ազգա-
կանը Սպանիոյ դահլիճ հետամուտ լինի , մինչդեռ արտաքին դոր-
ծոց պաշտօնէսին՝ Կրամօն կրակոտ գութը՝ Ծերակուտին և Օ-
րէնսդիւր ժողովին կ' յայտնէ թէ Քրանսա երբեք չպիտի հանդու-
րէ որ Հօհէնցոյէրն մը (Բրուսիոյ հարստութեան անունը) Սպա-
նիոյ զահը բաղմի : Այսպիսի թուացիկ և երբեմն ստոյգ յայ-
տարարութիւններ երկու դրացի ժողովոյց կ' իւրբ կ' զրդուեն . Բրու-
սիոյ թագաւորն ու Պիսմարդ այս խնդրոյն մէջ ազէտ կ' ձեւանան՝
Քրանսաի գեսպան՝ միամիտ Պէնէտէթիին առջև և առաջին դործ
մը սեպելով՝ միջամտիլ չեն ուզեր : Անկիսա մէջ կ' մննէ դործն
անուշ տեղը կապելու , Հօհէնցոյէրն իր հրաժարականը Սպա-
նիոյ դահլիճին կ' ղըկէ , և աստարեղէն կ' քաշէ : Կրճիմը պարզաժ
և զրդութեան սուիթը ջնջած կ' կարծէր՝ երբ Կրամօն գութը՝
նոր , այլանշակ պահանջում մը կ' ձեւէ և կ' սնդէ՝ որ Բրուսիոյ
թագաւորն երաշխաւորէ թէ այնուհետեւ Հօհէնցոյէրնի իշխանը
բնաւ Սպանիոյ դահլիճ հետամուտ չպիտի լինի . յետոյ մեծա-
սպաս ճառեր տղայօրէն կ' արձկեն , որ իրօք պատերազմի հրա-
տարակումներ էին : Պարսպ տեղը՝ Պ . Թիէր . Ժ . Գալլը , Ժ .

Սիմօն պաշտօնէից ընթացքն ու ժողովին խանդը կ'դարձնէ, կ'այսպանեն, և կ'զուարէն որ ֆրանսա անիրաւ է և պատերազմի անկազմ և անպատրաստ : Բրուսիոյ թաղաւորը բացէ 'ի բաց կ'մերժէ Կրամօնի խնդիրը, այս ալ յուլիսի 19-էն պատերազմ կ'հրատարակէ Բրուսիոյ, որ կ'յաջողի բոլոր Գերմանիա՝ յանուն գերմանական միութեան՝ սարսել սոյն պատերազմին զորձակից լինելու : Իսկոյն դաշնակցութեան ամէն կողմերէն զունդադունդ կ'յառաջանան քանի մը բանակներ դէպ 'ի ֆրանսաի սահմանները, միւս կողմէն ալ ֆրանսա՝ որ կ'սլարժէր 'ի հարկին մէկ միլիօնէն աւելի զօրք հանելու, և շիտակ Պէրլին քալելու, որուն լը Պէօֆի ըստարապետը կրկին կրկին կ'հաստատէր թէ ռազմի համար ամէն ինչ պատրաստ է, այնպէս որ Կոնկլէ մ'անդամ պէտք չալիտի զղալի քանի մը տարւան համար, յառաջ կ'քշէ իր զումարտակները դէպ 'ի Հոնոս, և նաւատորմին ալ դէպ 'ի Պալթիկ ծով : Սակայն արի տես որ լը Պէօֆի պատրաստութիւնները լոկ թղթի վրայ են եղեր, վասն զի այն զաղընական լէգէոններն՝ որ Մեծն Նափօլէօնի օրովն աշխարհ զղըղեցին՝ անմարդ, անպաշար, անզլուխ և կարծաժէն սակաւթիւ վաշտեր են եղեր, այնպէս որ երբ Նափօլէօն՝ կայսրուհին խնամակալուհի կարգէլէն ետե՛ Մէցի բանակակեղերն կ'հասնէր՝ ամէն ինչ անպատրաստ կ'դնէր և ասդին անդին կ'դեղերէր : Իսկ Մեծն Նափօլէօնէ վեր՝ դարուս անուանի ռազմադէտ՝ Մօլթէ՝ 'ի վաղուց պատրաստած յատակադիմն 'ի կատար հանելու՝ ոչ միայն հանճար, անբաւ ռազմամթերք ու հրազէն ունէր, այլ և քաջալարժ, անվեհեր և չարքաշ զօրադնդեր, և ֆրէտէրիկ Շարլի, Պունի, Սաեմեցի, Վերտէրի պէս աջակիցներ : Ուստի կայծակի պէս կ'իջնեն գերմանացիք ֆրանսաի հողը, և հետզհետէ Վօրթի, Սքիքէրի, Կրավօղի և այլն յաղթութիւնները տանելով՝ Մէտանի աննման անձնատուութեամբ իրենց յաղթական քայլերը կ'ստակեն : Բոլոր Մաք-Մահոնի բանակը՝ կայսեր հետ դերի կ'իյնան Գերմանացոց ձեռքը : Բարիլի մէջ Հասարակապետութիւն կ'հրատարակի (սեպտ. 4), կայսրութեան հացկատակները՝ Օլիվիէ Լէիւ-Գլէ, Բուէ ծակէ ծակ կ'փախչին, և Վըդային պաշտպանութեան անունով առ ժամանակեայ կառավարութիւն մը կ'հաստատի Թրօշիւ զօրապետին նախագահութեամբ : Ահա այն ատեն՝

եթէ ամրապինդ և ազատական Գերմանիա Հասարակապետութիւնը բարեւէր և անոր ձեռք կարկառէր, եթէ Թիւրքի դաշնագրութիւնը շատ չփշէր և Բրուսիոյ թաղաւորին փառասիրութեան չափ մը դնէր և անոր խոստումը յուշ ածէր, այն ատեն վսեմադոյն յաղթութիւն մը տարած կ'լինէր՝ վերջ տալով պատերազմին և ապագայ անհուն աղէտից, քանի որ իր կռիւն ուղղակի Պօնաբարդեան ցեղին դէմ էր, քանի որ Ֆրանսա՝ Ժ. Ֆավրի բերնով խաղաղութիւն կ'առաջարկէր, առանց քուլ մը կամ բերդերէն քաւ մը առլու։ Սակայն թաղաւորները շուտով կ'մոռնան իրենց խոստումը, սակայն Պիսմարկ՝ Մեծն Նափոլէօնի Բրուսիոյ վրայ դրած հին պայմաններուն վրայ իրենները կ'չափէ, Ալսաս ու Լօրէն կ'պահանջէ, իբր ապահովութեան երաշխաւորութիւններ, կ'պահանջէ Ֆրանսայի նաւատորմին մէկ մասը, պատերազմի տարապայման ծախս կ'պահանջէ որ խաղաղութիւնն ընդունի։ Բայց Ֆրանսա սրտմտութեամբ կ'մերժէ այս ծանր պահանջումները և իր 300 հազարէն աւելի զերի ընկած արիասիրտ զաւակները մոռնալով՝ զօրք կ'ժողովէ, Բարիզ, Օրլէան, Լիօն կ'ամրացնէ և Կամպէդաի հոգեշունչ և առնական ձայնին՝ նոր բանակներ՝ հմաշուրթեամբ մը՝ կ'կազմելին, կ'մարդկին, կ'զինակին և կրակի կ'վազեն դիւցազնաբար։ Մէկ կողմէն գերմանացիք Բարիզ կ'պաշարեն (սեպտ. 19), միւս կողմէն դէպ հիւսիս, հարաւ կ'գլխեն, հոկ. 29էն՝ Մէյ՝ ինը շաբաթ գլխանալէն ետեւ՝ Պաղէնի հետ անձնատուր կ'լինի։ հետզհետէ Օրլէան՝ որ դեռ Ժան ա'Արդի մը կ'սպասէ, Տիժօն, Ամիէն կ'առնակին, Բալլառին, Շանզի, Պուրպաքի, Ֆէտէրոյ դաղղիացի զօրապետները փորձ կ'փորձեն Բարիզի օդնութեան հասնիլ, և արիութեան նախճիրներ կ'գործեն, մինչդեռ Թրօշիւ և Տիւքրօ յաճախ յարձակումներ ընելով՝ դերմանական պաշարող զուգերը ճեղքելու կ'ճգնին, բայց ընդ ունայն կ'ճգնին։ Այս պարադաներու մէջ Բրուսիոյ Վիլլիէմ թաղաւորը Գերմանիոյ կայսր կ'հռչակելի՝ Վէրսայլ դաշնակից տէրութիւններէ, և լրագրի մ'ըսածին պէս՝ մինչ Ֆրանսա խնդաղին կ'գիտէ որ պատերազմի երեսէն Նափոլէօնեան կայսրութիւնը կ'կործանի, Գերմանիա իր գլխին վրայ նոր մը կ'ընտրէ։

Սակայն տակաւին Բարիզ կ'տոկայ, մարտին վախճանը մօտալուտ չ'երևիր, և ամէն օր, ամէն ժամ մարդկային դիակներ, ա-

ւերակներ , փլատակներ , աղէտ ողբ ու կոծ կ'աւելնան : Գերմանացոց զիջքն աւելի կ'ծանրանայ , ամէն քարի և թփի տակէն զինուոր մը կ'գտնեն սպառազէն , և Խրոպաի համակրութիւնը՝ Սէտանէն վեր՝ օր օրի կ'կորուսեն : Ֆրանսա կ'հեծէ , սյլ կ'զիմանայ , հայրենասիրութեան մէջ զանձեր կ'գտնէ , չէզոք տէրութիւնները կ'թողուն որ այս ազդասպանութիւնը կատարի , մինչև որ վաղ կամ անաղան այս հրդեհը հանրական դառնայ և անբարբառներն ալ լափրկէ :

Արդէն նոր շփոթութիւններու ծայրը փրթաւ . Ռուսիա՝ բոլոր եւրոպական մեծ տէրութեանց Քնաճարք մը (dési) կ'նետէ և 1856ի դաշնադրութեան Սև ծովու չէզոքութեան վեբաբերող մասը վէճի տակ կ'ձգէ : Պիամարդ Լոքսէնպուրկի չէզոքութիւնը կ'հերքէ իբր ուխտադրութ : Այս հիւսիսային որոտման վրայ դաշնակից գահալինճներու վրայ մնայլ մը կ'իջնէ , ամէնքը կ'յուզին , ետեւէ ետեւ բողոքներ կ'տեղան , և ԹՈՒՐԿԻԱ՝ որ Բէրա կրակի ճարակ տեսնելով՝ (յունիս 5) այն ինչ սթամբուլ ներքին բարեկարգութիւններու և շինութիւններու կ'ստրապէր , Բուսթիլի երկաթուղին յատակադծերը կ'քննէր և կ'վաւերէր , Խրոպիլին՝ սղայմանադրութեանց հաւատարմութեան կ'յորդորէր , Երասխանութեան Դաշնեբը (capitulations) բաժնալու կ'ջանար , Քարաաղի սահմանաց հին խնդիրը դբամական փոխադրնութեամբ մը կ'լուծէր , Պուլղարներու կրծնական ինքնօրինութիւնը կ'ձանչէր , Թուրքիա՝ կ'ըսեմ , Կորչաքօֆ իշխանին (հոկ. 19) շրջաբերականին անվրդալ կ'նայի և գործը Խրոպիլի տոտեանին կ'յանձնէ : Եւ իբր Բրուսիլի առաջարկութեամբ խնդրոյն քննութիւնը Լոնտօն դումարած դեսպանաժողովին կ'յանձնի և յուսալի է որ ծանր հետևութիւն մը չունենար :

Ահա այսպէս կ'լրանայ 1870 տարին՝ ահաւոր սրտաբազումն վերջը չտեսնելով , և 1871ը կ'սկսի նոր նոր քաղաքական բանակցութիւններու և աներեւակայելի փոփոխութիւններու դուռ մը բանալով :

Մ. Մ.

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԳՐԱԽ ՄԸ

Ա.

1864^ե Պօլիս կ'դառնէի : Առտու մ'երկու բարեկամներու հետ ելայ մօտակայ Ս. * * եկեղեցւոյն Տ. Ն * * քարոզիչը մտիկ ընելու դացի՝ որու քարոզները հասարակութենէն շատ հաւնութեամբ էին :

Սոյն օրը տաճարը լի էր և քարոզիչն իրեն նիւթ ընտրեր էր Ս. Գրոց սա խօսքը թէ «ստախօսը կրակէ ու ծծմբէ լճի մը մէջ պիտ' այրի յաւիտեան» : Այս առթիւ անի ոչ մեծը ոչ պզտիկը կ'իսնայէր և՛ նոր Ոսկեբերանի պէս՝ իր ունկնդիրներուն ամենքն ալ միահամուռ ստախօս կ'կոչէր : Կ'ըսէր թէ ամենքն ալ նախ իրենք իրենց, ետքը իրենց բարեկամին և համայն աշխարհի սուտ կ'իսուէին, ամենքնուն ալ բանը դործը խաբէութեան վրայ հիմնած էր : Մինչև անդամ երախտները դեռ խօսիլ չսկսած սուտ կ'իսուէին նշաններով : Աերջապէս իր ճառը լմնցուց լալաւիքին աղաչելով և իր ունկնդիրները հրաւիրելով որ իրենց բարքը վարքը շտկեն և ճշմարտութիւնը խօսելու սկսին :

Երբ դուրս ելանք, երկու բարեկամներուս մէջ յետադայ խօսակցութիւնը սկսաւ .

— Ո՛ւֆ, ձանձրացայ, ըսաւ մէկը որ Արմենակ Երանեան կը կոչէր, իր քարոզին պէտք չունէի ճշմարտութիւնը խօսելու յորդորելու համար, ես արդէն երբեք սուտ չեմ խօսիր :

— Կ'կարծես, հարցուց միւսը, Մամբրէ Շնորհքեան անունն :

— Անշուշտ . . . միթէ կ'տարակուսիս :

— Քա՛ւ լիցի . բայց չէ, շարունակեց Մամբրէ ժպտելով, ահա ես ալ մտքէս անցածը շիտակ չեմ զրուցեր . . . որովհետեւ զրուցելը հաճելի չէ և . . .

— Մամբրէ, չեմ կարծէր որ միտքդ ճշմարտախօսութեանս վրայ կասկածիլ է . . . այդ չեմ ներեր :

— . . . Կամ վտանգաւոր կրնայ ըլլել, շարունակեց Մամբրէ առանց իր բարեկամին ընդմիջումը բանի տեղ գնելու :

— Ինծի նայէ, կրկնեց Արմենակ, միտքդ բացատրէ, ըսածդ զիս կ'վիրաւորէ :

— Իրաւունք չունիս առնելու, սիրելի Արմէնս, պատասխա-

նեց Մամբրէ, սա ըսել կ'ուզէի միայն որ եթէ միշտ ճշմարիտը կ'իսօսիս, բարոյականութեան հրաշալիք ո՞ր կամ կուտասէր հրէշ մ'ես :

— Կեանքիս մէջ սուտ ըսած չեմ, դոնէ չեմ յիշեր որ աշխարհք դալէս 'ի վեր խաբէութիւն ըրած լինիմ, պատասխանեց Արմենակ ծանրութեամբ : Աշխարհիս մէջ, շարունակեց նա, սուտ ըսելէ աւելի ստորին, աւելի վատթար . . . աւելի . . .

— Ճիշդ ես, սուտ խօսիլը ստորին և վատթար բան է, բայց պիտանի չարիք մ'է, ըստ Մամբրէ :

— Ընդհանրապէս ճշմարտութիւնը պիտանի է, անկէ աւելի գեղեցիկ, ազնիւ ու վսեմ բան չկայ :

— Համամիտ եմ, վրայ բերտ Մամբրէ, բայց եթէ ճշմարտութիւնը բոլոր իր գեղեցկութեամբ ու վսեմութեամբը միայն օր մը Պօլսոյ մէջ թաղաւորէր այնպիսի տակնուվրայութիւն մը պիտի ծագէր որ նմանը անսնուած չէ :

— Կ'ցաւիմ վրայ, սիրելի Շնորհքեան :

— Կրնայ լինիլ, բայց սոսկ ճշմարտութիւնը երկիրը տակ ու վրայի կ'բերէ, և կ'կրկնեմ որ եթէ միայն 24 ժամ տեւէ այն, այնպիսի դժբաղդութիւններ յառաջ կ'դան որոց քով Երուսաղէմի կործանումը, Բաբելոնի խառնակութիւնը խաղալիկ կ'դառնան, ընդհանուր շփոթ ու անկարգութիւն մը կ'ծագին :

— Մամբրէ, երբէք չեմ կարծեր որ աշխարհ այդքան ապականած լինի . . . երբէք, դոչեց Արմենակ :

— Բայց Ս. Գիրքի ալ ըսածս կ'հաստատէ և կ'յարեւու որ երբ երկրի վրայ լոյսը պիտի փայլի դատաստանին օրը մօտ պիտ' ըլլի, վասն զի ալ կարելի պիտի չըլլի երկրի վրայ բնակիլ :

— Ի՞նչ կ'ուզես ըսէ, այդ վարդապետութիւնը չեմ կրնար ընդունիլ :

— Բայց, սիրելի Արմենակ, դու քու վրայ փորձէ անդամ մը առանց գործերուդ շրջանէն ելնելու : Հաբաթ մը կամ օր մը միայն ճշմարիտը խօսելու յանձնառու եղիր և տես զլուրդ ինչ կ'դայ :

— Ի՞նչ կ'դայ :

— Մարդարէ չեմ, բայց կրնամ քեզի դուշակել որ, եթէ դու Արմենակ Երանեան վաղեմի վաճառական Աւետիս Երան-

եանին եղբորորդին ու ժառանգը . . . Պէյօղլուի թաղին ամենէ աղւոր աղջկան՝ Նդիս Վարդանեանի նշանածը, և Պ. Միւլլէր և ընկերաց զրազիրը, եթէ օր մը միայն ճշմարտութիւնը խօսիս, վաճառականներուդ քովէն կ'ճամբուիս, նշանածէդ կ'ըսուիս ու հօրեղբորդ ժառանգութիւնը կ'կորսնցնես : Իսկ եթէ փորձը աւելի երկնցընես, խեղդի տեղ կ'անցնիս, վտանգաւոր խենդի՝ ու առօք փառօք Փրկիչ կ'դուիս :

— Ուրեմն, Մամբրէ, այնպէս կ'կարծես որ ես հօրեղբորս սէրը, նշանածիս համակրութիւնը և վաճառականներուս վստահութիւնը սոսա խստելով վաստկած եմ . . . և ըսել կ'ուզես որ եթէ մէկ շաբաթ անկեղծ լինիմ՝ բոլոր այդ հաշած առաւելութիւններս կ'կորսնցնեմ :

— Այո, ճիշդ, ամենաճիշդ կերպով կարծիքս այդ է :

— Շատ կ'փափաքէի քեզի ազէկ դաս մը տալ, Մամբրէ :

— Ինծի նայէ . . . եթէ պատուոյդ վրայ խոստանաս որ ամբողջ շաբաթ մը միայն ճշմարտութիւնը ըսես և առանց այդ արտաւերայիքներէդ կորուսելու խոստմունքդ օր մը կարենաս բռնել . . . և կամ շաբթւան վերջը եթէ իբրեւ խեղդ Փրկիչ չդրկուիս, բոլոր քաշածներուդ փոխարէն, թէ և հարուստ չեմ, բայց 400 լիւրա կ'հատուցանեմ՝ որպէս զի փորձը աւելի հրապուրիչ ըլլի :

— Քու 400 լիւրայիդ պէտք չունիմ, պատասխանեց Արմենակ :

— Իսկ եթէ ես շահիմ, նոյնքան արժողութեամբ ապրանք տաս ինծի :

— Խնդիրը ապրանքի վրայ ալ չէ :

— Քանի որ ոչ առնել կ'ուզես և ոչ տալ, ուրիշ բան մը կ'առաջարկեմ : Խոստմանդ փոխարէն կ'խոստանամ՝ որ սիրուն Նդիսիդ երեսը չնայիմ՝ անոր տան առջևէն անցնելու ատեն :

— Հա, հիմակ կ'ընդունիմ, պոռայ Արմենակ ձեռքը իր բարեկամին երկնցնելով :

— Ուրեմն սակարկութիւնը լնացա՞նք :

— Այո, բայց ճշմարտութիւնը ըսելու եմ ըսելովս, չ'հասկցիր որ ամէն մարդու պակասութիւններն երեսին սլախ տամ :

— Անշուշտ չէ, պատասխանեց Մամբրէ, միայն քեզի եղած հարցումներու և դիտողութեանց անկեղծօրէն սլախ պատասխանես, թէ գնորդներուդ և թէ քու սովորապէս արեսնած մարդերուդ :

— Լաւ , բայց մեր ծանօթներուն չըսելու ես որ ինձ այնպիսի
հարցումներ ընեն որոց անասնորժ պատասխաններ տալու ստիպւիմ :

— 2է , պատուոյս վրայ , պատասխանեց Մամբրէ , ամէն ինչ
օրինաւորութեամբ պիտի կատարուի , և ոչ մէկու մը բերան պիտի
բանանք շաբաթը անցնելէն յառաջ : Դու ալ քու կողմէ պա-
տասխանելէ պիտի չփախիս , զրաւ դրած ըլլելդ պատրուակ
բռնելով :

— Անհոգ եղիւր : Ե՞րբ պիտի սկսինք :

— Հասարակօրէն առտու ժամը քանիին կ'արթննաս :

— Եօթին :

— Լաւ ուրեմն , վաղը ուրբաթ մարտի 6ին , մտադրութիւն
ըրէ իրաւը խօսելու , և դալ շաբաթ ամսոյն 13ին կ'սոստանամ
որ Փրկիչ պիտի դուիս :

Արմենակ չհաւատալով մը ժպտեցաւ , և որովհետեւ իմ իջած
պանդոկիս դրան առջեւ էինք իրարու ձեռք սեղմեցինք ու բաժ-
նըւեցանք : (Հարաւայելէ) ԳՐ. ՄՍԵՐ

ԱԶԳԱՅԻՆ

1870

Տարիներ կ'հոլովին , ազգեր կ'ելնեն կ'իջնեն , արեան հե-
ղեղներու մէջ կ'սրբւին , աշխարհիս քաղաքական սահմանները
կ'փոփոխին , նոր իրաւունքներ , նոր քաղաքականութիւն՝ ուսմբի
հետ դուրս կ'պայթին և տակաւին մեր Ազգը չուշաբրիւր և նշա-
նաւոր քայլ մը դէպ յառաջ առնլու ճիւղ չընեն : Միթէ ան-
ցեալը մի միայն Խորենացոյն ողբը կտակ ձգած է մեզ , միթէ
ամէն տարեղլխի մի և նոյն տխուր հաղներդը պիտի կրկնենք :
Քննէ նախորդ տարիներու ազգային վիճակը և համեմատէ 1870
տարւոյ հետ , ինչ տարբերութիւն պիտի դանես արդեօք , թե-
րեւս յոռադոյն մը :

Քրդաց հարստահարութիւններ , առաջնորդական վէճեր , ժո-
ղովրդային երկպառակութիւններ , վանական կոիւներ , ահա ա-
սոնք են Հայաստանի մշտաւ տառապանաց նկարագիրը , սա զա-
նազանութեամբ որ անոր տեսարանին վրայ ամէն տարի՝ դերա-
սանները կ'փոխւին և երբեմն կ'ծպտին : Ի՞նչ փոյթ է որ Հիզա-

նու մէջ հարստահարիչը Ապտուրահման մը կամ Սապաթուլահ մը լինի, դու բրած վէրքը նայէ որ անբուժելի է, դո՛ւ այն մատը նայէ որ թոյլ կ'տայ. ինչ փոյթ եթէ այս ինչ կամ այն ինչ շէյխը, պէկը կամ մէլիքն է որ Վասպուրական աշխարհը դարումար կ'ընեն, տուն, եկեղեցի, կեանք, պատիւ, կրօն՝ կը թալեն, կ'պղծեն, կ'զբաւեն, կ'բռնաբարեն. դո՛ւ այս աղէտից յարատեւութեան վրայ զարմայիր: Իրաւի ուր ուրեմն Կարինէն կամ ուրիշ տեղէ զօրաց դունդ մը կ'ղրկուի այն վիշապին գլուխը կտրելու համար, սակայն այն ինչ կ'հեռանան, և մէկին տեղ հարիւր հատ գլուխ կ'բուսնի. Հէրքիւլէսի մը բազուկը պէտք է որ մէկ հարուածով ամէնն ալ ջախջախէ:

Եթէ քիւրդ վիշապն անբան հօտ մը գտեր կ'յօշտակ՝ Օսմանեան պետութեան արդարանէր օրինաց հակառակ՝ ինչ անուն տալ պէտք է այն համարին թշնամիներուն որ ամբողջ վիճակաւ ձախներ կ'վրդովեն, կ'կեղեքեն: Ահա Վան՝ Պօղոս դատապարտ վարդապետին ճանկին տակ կ'հեծէ, Սեբաստիա՝ Կարապետ եւ պիսկոպոսի երեսէն կ'տագնապի, Կեսարիա՝ վանական հաշիւներու պատճառաւ տախնուվրայ կ'լինի, երբեմն խաղաղիկ Եվդոկիա՝ կ'տասանի քանի մ'ինքնակոչ ազգապետներու և Անձնուէր ընկերութեան կուսին մէջ, Բաղէշ՝ որ իր հայրենասէր Մամբրէ վարդապետովը շատ բաներ կրնար ընել, երկպառակութեան մէջ կ'տառապի, մինչդեռ հռոմէական ազգայիններ Հայոց դերեզմանատունը դբաւելու կ'աշխատին. հապա Բաբերդ, հապա Ճանիկ, ինչ գայթակղութեան օրինակ կ'ընծայեն Գեր. Գրիգորիսի շնորհիւ՝ որ վիճակներ որսալու համար առելն անդին կ'արշաւէ. հապա Ալէքսանդրիա՝ ուր վարդապետներ իրար կ'ապստակեն կըսեն, սուրբ տեղեաց իրաւունքը կ'բռնաբարեն, և Գեր. Մեսրոպը Փարիս հանրմի կտակը, Գալստեան կտակին հետ տնօրինելու համար ազգասիրաբար Եղիպտոսի ջերմութեան, մթեղներուն կ'տոկայ, և մինչև անգամ Կեղրոնական Վարչութեան հրամանին, հապա . . . բայց ո՞ր մէկը թուում: Եթէ քանի մը տեղեր՝ ինչպէս Զմիւռին՝ ուր մեր Ամեն. պատկառելի Սրբազանը խաղաղութիւնն անվրդով պահելու կ'ջանայ, եթէ Բերիա, Տրապիզոն և Կարին, ուր ժողովուրդները դո՛հ և հանգարտ կ'երևին, եթէ՝ մանաւանդ Երուսաղէմ՝ որ շնորհիւ Ամեն. Պատրիարքին կը

զարգանայ և Ս. Պապին անսխալականութեան սկզբունքը գործնական կերպով մը կ'հերքէ, քիչ մը սփոփանք չբերէին, հայրենասիրի մը սրտին յուսահատութիւնը միայն բաժին պիտի իյնար:

Սակայն 1870 թուականը Ս. Հայրիկը պատրիարքական դահին վրայ տեսաւ, իբր Հայաստանի հրեշտակ մը բոլոր Ազգին յոյսերով շրջադարձեալ, և անոր թեւերը տակաւին թռիչք չառին, վասն զի՝ զահ ու բարձ ամէն հայրենասիրական խանդ կը կաշկանդէր. տեսաւ նաև Սահմանադրութեան նշոյլը, միանգամայն Ընդհանուր ժողով մ'որ փոխանակ խմբովին նորոգելու հասնել և արանի չափ զաւարային երեսփոխանաց ընտրութեամբ օգոս. 21ին իր առաջին բացումը ըրաւ: Հետզհետէ նիստերը շարունակելով շատ խնդիրներ յուզեց, երկար ճառեր լսելէն ետեւ՝ մէկ քանին լուծեց, ինչպէս Սոդ. կաթողիկոսութեան խնդիրը՝ որուն առթիւ Մեծ. Օսեան էֆէնտիի ատենաքանութիւնը՝ աստ նիստի ատենադրութիւնը կ'աժէ: Առթողիկոսի ընտրութիւնը թեմականաց, և վաւերացումն Ընդհ. Ժողովին մնաց: Իսկ Եջմիածնայ Մայր Աթոռոյ իրաւանց ակոյեան կենալու ատենը՝ Ընդհ. Ժողովը՝ փոխանակ օրհնութեան կոնգրէի՝ որ մինակ փծուն մասնաւորութեանց կ'բաշխի, թշնամեալ կոնգրակ մը կ'ընդունի, որպէս թէ Եջմիածին և Սիս համազօր և չէ թէ հակաթու դատուելով Մայր Աթոռոյ իրաւունքն առաքուր կ'կոխուին: Ս. կաթողիկոսն՝ որ նոյն Ընդհ. Ժողովին պարտաւոր է իր էութիւնը՝ կ'նմանի այն փառամոլութենէ և մարդադաւ քաղաքականութենէ մոլորած հօր մ'որ իր զաւակները կ'ապտակէ՝ ճիշտ այն միջոցին որ անոնք իր շղթաները կտորելու կ'ազնին:

Ազգին բարոյական և մտաւորական վիճակն ալ ընդհանրապէս նոյն ողբալի դրութեան մէջ է: Ս. Հայրիկն այս զիտնալով կրթութեան խորհուրդ մը կ'կազմէ, որ հիմնադիր մը կ'ըլլնէ և թաղերուն մէջ կեդրոնական բարձրագոյն ուսումներու դպրոցներ հիմնել կ'որամաղթէ, և իր տրամադրութիւնը մտքին ու հիմնադիրը ծոցին մէջ կ'մաշին: Եթէ մայրաքաղաքն այսպէս, ինչ են արդեօք դաւաճական դպրոցներ: Ինչպէս ամէն նոր դասատու՝ ըստ քմաց՝ ուսման եղանակ կ'փոխէ, նոյնպէս ամէն նոր վարչութիւն դաստիարակութեան նոր հիմնադիր մ'իւր ծոցն ունի,

ինչպէս որ ամէն Ընդհ. ժողով նոր ատենական կանոններ, և Ազգն ալ նոր Սահմանադրութիւն ունի. ամէն ինչ նոր վերջապէս՝ հին դրոշմներու մէջ, քանի որ ազգային դաստիարակութիւնը ներկայ սերունդը վերանորոգած չունի։ Ամէն անդամուն որ փոփոխութիւն մը պատահի այրութենէն կ'սկսինք և բնաւ Փ ին չենք հասնիր, բոս որում նախորդաց փորձառութիւնն առ ոչինչ կ'զրենք։

Սակայն մեր արեւելեան Կաթողիկոսական համազորները նպատակի մը հասնելու կ'սկսին նշանաւոր յեղաշրջումէ մ'ետքը, և այժմ երկու սրի մէջ կ'երերին։ Ո՛չ Արևելեան եկեղեցւոյն կողմը կ'զիմեն ոչ Արևմտեանն կ'անցնին. Գեր. Հասունը՝ Ս. Պապին սէյիտը կը վաեն, Ս. Պապը կ'ընդունին, թէև Ս. Պապը զիբենք չընդունիր. յորձանքի մը մէջ են, անդգայօրէն կ'սահին, և կարծեն թէ գէպ իրենց մտադրած կողմը կ'երթան, թէև իրօք Ս. Պետրոսի ուղիանին մէջն են, եթէ վաւերական քայլ մը չառնուն, եկեղեցիէն ներս կամ դուրս միջին ճամբայ չկայ։

ՀԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ձեր Սահմանադրութիւնը քառակուսի անիւներ ունեցող կառքի մը կ'անանի», բոս անուանի քաղաքադէտ մը քանի մը հայերու, «պէտք է բոլորակ անիւներ տալ անոր որպէս զի շարժի»։

Եւ երբ 1866 մարտի 20ին հայ բերնով տրւած տեղեկութիւններու վրայ՝ Բ. Գուռն 'ի պաշտօնէ Սահմանադրութիւնը կախեց (suspendre) լոկ անհողի ընդհանուր ժողովը թողնով՝ որո՞ւ մոքէ կ'անցնէր որ 1840էն վեր ակնդէտ ստատած օրինադիր մը, անհնարին դժուարութեամբ երկու անգամ հաստատւած օրինադիր մը՝ զրեթէ հինգ տարիէն ետք կենդանութեան շունչ պիտի տայ և 1870ին լոյս պիտի տեսնէ։

Իրաւի աշխարհիս ամէն Սահմանադրութիւնները դեռ ճշգրտեալ չափած չեն գտեր, ամենն ալ՝ իբր մարդկային դործ՝ փոփոխական են և կատարելութեան ընդունակ՝ սակայն չկայ Սահմանադրութիւն մ'որ հայկականին կեանքը, կամ լու ևս ըսեմ, մահն ունեցած լինի, բո՞ւն մահ։ Այն ինչ 1860ին ազգայինը կ'ընէ որ իբր բորոտ կ'հալածուի և 1862 յուլիսին հողին կ'փչէ ամբողջից մանկլաւին ներքեւ, և ահա 1863ին նոր դրոշմով կ'վերածնի, կ'հուշակուի և 1866ին կ'թաղուի նորէն յարութիւն

առնելու հասար անշուշտ, քանի որ անոր սկզբունքն անմեռ է
կ'ըստի ժողովրդեան հոգւոյ մէջ, ինչպէս որ Հիւնքեար Սքէլէ-
սիի մարգերը, բլուրներն ու ծառերը կրնան վկայել . . . :

Ի՛նչ ողորմելի տեսարան, տասնամեայ շրջանի մէջ՝ Սահմա-
նադրութեան չէութիւնն աւելի երկարատե եղաւ քան էութիւ-
նը, քունն աւելի շատ տեւեց քան արթնութիւնը, եթէ արթնու-
թիւն համարւի ճղնաժամ մ'որ ծննդենէ ցլծաղում կ'շարունակէր :

Արդէն ուրիշ պարագայի և թերթի մէջ սոյն ճղնաժամին և
Սահմանադրութեան դժայտեհ և յեղակարծ անկման վրայ մեր
թուիքը յայտնած ենք, և կրկնել չենք կամիր, այսչափ միայն
ըսենք որ՝ ըստ մեզ, մարտի դէպքը պատմութեան առջև չար-
դարանա՛ր՝ թէ համամտութեան, թէ իրաւասութեան խնդիրը,
թէ ազդին խռովայոյղ և անկերպարան վիճակը բռնւին իբր չար-
ժառիթ, թէ Սահմանադրութեան թերութիւններն՝ իբր սլատ-
րուակ : Քանի քանի թերագոյն և ազդաւեր կանոններ չէ կրած
ազգը ընելեայն լաւագոյն օրերու յուսով, քանի քանի բռնւն
վճիռներու ներքե ղլուխ չէ ծռած անմուռնչ, և միթէ արդէն
Սահմանադրութիւնը մահատու հարւած մը չէ՞ր հինօրեայ եղծում-
ներու, միթէ քայլ մը չէ՞ր դէպ իրաւանց յաղթանակին : Ու-
րեմն ինչո՞ւ համար ժողովուրդն անկկալած արդիւնքը չքաղեց .
վասն զի չթողուցին որ քաղէ, վասն զի Պօլսաբնակ հայերն
անդադար որոգայ թներ սեսնելով չորս կողմը՝ ժամանակ չէին զրա-
ներ դաւառային հայոց մտածելու և անոնց աջակցութեամբ զօ-
րանալու, վասն զի եթէ թեթեւ շարժում մը, յանդիմանութիւն
մ'ընէին, եթէ լրագիրները քիչ մը բարձր խօսէին, իսկոյն
դարանակալ կուսակցութիւնը «կրակ կայ» կ'սրուար և ջահով
հրդեհին կ'վազէր : Սոյն այլակերպ կուսակցութեան ղէնքերը
տեսակ տեսակ էին : Ժողովուրդն իբր ապստամբ մրոտել, ան-
մեղներն ոստիկանութեան դուռը մահանել, յարդի անուաններ վար
զարնել, ամէն ուրեք դուսի լրտես մը, և Ուլնիոյ ծայտեալ
մարտիկ մը նշմարել, զաղանի ընկերութիւններ ենթադրել, մէկ
խօսքով՝ ազգը տէրութեան աչքին կասկածելի երեւցնել՝ իր սո-
վորական մեքենայութիւններն էին : Ի հարկէ՝ այս զինուոց առջև՝
ժողովրդեան ձայնը պիտի մարէր, չէ թէ առ ահի կամ մեղա-
պարտութեան զղացումէ մը՝ այլ միայն ապշութենէն : Քանզի

չէր կրնար երազել որ զանախն այնպիսի սեռի մարդիկ որ Աղզն ապստամբ ցոյց տալու յանդինն, մինչդեռ իր դարաւոր հաւատարմութեան նշանները կանգուն էին, չէր կրնար ըմբռնել թէ ինչպէս սահմանադրական ժողովուրդ մը կրնայ իր զրիչը կոտրել, լեզուն սրկել, օրինաւոր շարժումներ զսպել, հակասահման զործերու դէմ ընդդիմութեան տարրերը չփնտռել։ Ահա ասկից հետեւեցան վճատութիւն մը, անտարբերութիւն մը, անիշխանութիւն մ'որմէ առիթ քաղելով թշնամին ըստ մեր օրէնսդիրներուն։

«Գութ անսական աշխարհը կ'թռիք, մեր ժողովրդեան պիտոյքն ու հանգամանքը չէր ճանչեր. Սահմանադրութիւնը եւրոպական ազգի մը վրայ ձևեր էք. ամէն բան նորոգ կազմելու համար հին շէնքը տապալեցիք և դեռ անգը բան մը չգրիք. ձեր շէնքած Սահմանադրութիւնն անշարժ է, և եթէ շարժի երբեք՝ փոթորիկ կ'հանէ, վստն զի ազգին անյարմար ու թերի է։ Ազգին կէսը համարատու խորհուրդ, միւս կէսը համարառու ժողով է, ո՞ր է ազգային մարմինը. ամէն խնդրոյ մէջ՝ ամէն անհատ պաշտօն ու ձայն ունի, խօսքն ու իշխանութիւնը ռամկիւնն է»։

Արդ՝ մեր օր նսդիւրներն՝ որչափ այս անսակ թելադրութիւններէ, նոյնպէս ուրիշ պարագաներէ դրդեալ՝ կ'նշմարեն Սահմանադրութեան թերութիւններն ու իրենց օրէնսդրական հեղինակութիւնը սաստիկ կ'վերաւորի։ Ահա այն ատեն բարձր կը հռչակեն ոչ միայն ժողովներու՝ այլ ըրադիրներու մէջ՝ անոր անդրեւորելի արամադրութիւնները, և մինչև վերաքննութեան հարկը՝ պայմանեալ ժամանակէն առաջ՝ տեսնելով՝ հակառակ կուսակցութեան հացին եղ կ'քսեն, փոխանակ օրէնքին պատշաճ յարդանքը քարոզելու. դանւեցան նաև այնպիսիներ որ իրենց պաշտօնակալութեան իր թէութիւն՝ Սահմանադրութեան անմիջական վերաքննութիւնը դրին։

Եւ ինչ եղաւ ասոր հետեանքը. ժողովրդեան մէջ՝ յուսահատութիւնը վճատութեան յաջորդեց, օրինայ յարզը՝ որ էաւ կան պայման մ'է՝ անոնց զործադրութեան և յարասեութեան, քիչ քիչ բարձաւ, շատ մը անօրինութիւններ՝ որ մինչև օրինաւոր վերաքննութեան ժամանակ՝ թերեւ ի կատար հասնէին՝ առ կախ մնացին և ժողովները կուսակցութիւններու ասպարէզ

դարձան : Սակայն դարձեալ այս շփոթութիւնները պատճառ մը չէին ընծայեր . Սահմանադրութիւնը դադրել տալու , և ազգը վատագոյն վիճակի մէջ գլորելու : Եթէ Սահմանադրութեան անժամանակ վերաքննութիւնն անմիջական դարման մը բերէր ազգին աղէտից , թերևս ապօրինաւորութեան կէտն անտես անցնէր , բայց ահա դառն փորձով տեսնեք որ դրեթէ հինգ տարիէն ետքը յաւարտ հասաւ , և դեռ կայան մը չգտաւ , մինչդեռ եթէ հնգամեայ պայմանաժամէն ետեւ՝ Սահմանադրութիւնը սահմանադրապէս քննութեան բովէն անցնէր , ազգը ցարգ աղէկ դէշ օրինաց շուքին տակ դտնւած կ'լինէր , և սահմանադրապէս վերաքննութիւնը քանի մը տարի առաջ աւարտելէն զատ՝ վատանդաւոր և անպատիւ նախընթաց օրինակի և շատ մը չարեաց տեղի չէր տրուեր :

Բայց միթէ մեր միտքը լոկ դաս մը մարդկան վրայ դնել է յանցանքը . ո՛չ , ժողովուրդն ալ՝ մանաւանդ Պօլսիւնը՝ անցեալ պարագաներէն անբասիր չէ կարող ելնել , որովհետեւ շատ անգամ իր իրաւանց պատախազ կանդնելու պատրաստ էր , առանց իր պարտուց պիտակցութիւնն ունենալու :

Երբ ժողովուրդն իր երեսփոխաններն ընտրելու ելաւ , իր խակութենէ կամ մարդկան նուազութենէ՝ չկրցաւ դտնել այն անկախ բնաւորութեան և թաղուն արժանեաց տէր անձերն որ ընդհանուրին շահերը բարձրէն նկատելով՝ պիտի կարենային Սահմանադրութիւնը փոթորկէ ազատել : Հետեւապէս առջի օրէն՝ Ընդհանուր ժողովը հիմնական անօրէնութիւն մը չըբաւ , կենսական խնդիր մը չլուծեց և ստէպ ընտրութիւններու զբաղեցաւ , առանց կարեւոր ընտրութիւններէ մին կատարել տալու , այս է , գաւառական երեսփոխանաց ընտրութիւնը : Այս ընտրութեամբ ոչ միայն ընդհանուր ժողովն օրինաւորութեան արայմանին մէջ կ'մտնէր , այլ և նոր նյժ ու դործունէութիւն կ'առնուր , գաւառական աղէտները գէթ ըստ մասին կ'զարմանէր , արոց խնդիրը կ'լուծուէր և զաղտնի յարձակումներու դէմ՝ պատկառելի մեծամասնութեամբ քաջալանջ կ'մաքսուէր ու կ'տոկար :

Այս յետահայեաց տեսութենէ ինչ եզրակացութիւն կ'ուզենք հանել , յայտնի է : Ազգ մ'որ այսօր շինած օրէնքը կ'թողու որ վաղն աւրեն , ազգ մ'որ բաւական լոյս և բարոյական զօրու-

Թիւն չունի զաղտնի խլրտումներն ՚ի զերեւ հանելու՝ իր իրաւունքը պաշտպանելով պարտքը կատարելու, և քուէին արժէքը ճանչելու, այսպիսի ազգ մը ստէպ մարտի 20ի վարչական պատահարի պէս պատահարներու սպասել պէտք է՝ նաև ապագային մէջ՝ Թէև վերաքննեալ Սահմանադրութիւնն առջինէն շատ զերազանց լինի:

ՎԵՐԱԲՆՆԵԱԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կայ զործ մ'որ ամէն բանէ աւելի պարզ և դիւրիմանալի ոճ մը պահանջէ, այս զործն է զբաւոր օրէնքը: Օրէնքն ազգին կողմէն, ազգին համար և նոյն ազգին հասկանալի լեզուաւ կ'շինուի. ուստի՝ որ և է մթութիւն, երկմտութիւն և նորաձեւութիւն կրնան ծանր և աղէտալի հետեանք յառաջ բերել: Ինչպէս որ օրէնագիր մ'իւր անձնականութիւնը մուծալով՝ ընդհանուրին շահն իր անկողնապահ իմացականութեան հորիզոնին վրայ կ'նկատէ, ամէն մասնաւոր նկատում, սրտաղին միտումներ ՚ի բայ կ'մերժէ, և միայն ազգին բոլորանուէր՝ ամէն մտաւոր և բարոյական գորութեամբն անոր անցելոյն, ներկային և ապագային մէջ կ'ապրի, նոյնպէս պէտք է որ իրեն յատուկ դրութեան ոճէն հրաժարի, եթէ՝ Պիւֆօնին ըսածին պէս՝ «ճն է մարդ»:

Գծբաղդաբար՝ երբեմն օրէնագրութեանց մէջ՝ բանուկ, յատակ ու ձեւ մէկիւրի կ'ձգւին և նորահնար խօսքի կերպեր կ'զործածուին, թերեւ այն դիտմամբ որ մեկնութիւններու և քաշքշուքի դուռ մը բայ մնալով՝ իրաւագէտներու ճարակ չսլակսի:

Այս անպատեհութիւնը մասամբ մը անսայ՝ կրկին ու կրկին սրբադրած՝ և Ընդհանուր Ժողովոյ վերաքննութեան յանձնաժողով Սահմանադրութեան մէջ՝ և մեծ ցաւ ու զարմանք զղացի: Յաւ ըստ որում՝ նիւթի խրանութեան հետ ոճի խրանութիւնն ալ աւելցեր է, զարմանք՝ որ Յանձնակմբին հայերէնապէտ և հմուտ անդամներու զրչէն այնպիսի սարօրինակ խմբադրութիւն մ'եղեր է:

Թէև այժմ՝ Ընդհանուր Ժողովոյ երեսփոխան լինելու պատիւը չունիմ, սակայն իրբև ազգային անհատ՝ իմ դիտողութիւններս նախ՝ նոր Սահմանադրութեան ոճին, և ապա՝ տրամադրութեանց վրայ ընելու պարտ կ'սեպեմ, և վստահ եմ որ այս ընթացքս

ծանր չերևիր, քանի որ նոյն իսկ Յանձնակումբը՝ աղաւ քննադատութեան պաշտպան է :

Օրինադրական պաշտօն վարող ժողով, խորհուրդ կամ աւկումբ մ'երբէք օրէնք մը չէ կարող խմբագրել միահամուռ, այլ մէն մի անդամ՝ մասնակի կամ ընդհանուր տեսութեամբ իր դիտողութիւններն և առարկութիւնները փաստերովը հանդերձ ընելէն ետե՝ ատենագրի մը ձևօք զանոնք կ'ամփոփէ և՛ յետ վերջնական որոշման՝ խմբագրութեան դործը մէկ կամ քանի մը հոգիի կ'յանձնէ :

Արդ՝ նոր Սահմանադրութեան առաջին բաժը կարգացողն անմիջապէս կ'զուշակէ՝ որ անոր ձև, դոյն սուղը Մեծ. Ռուսիոյնեան էֆէնտիին դրիչն է, դրիչ մ'որուն յատուկ հակումը ամէն հայ բանասէրներու ծանօթ է : Մեծ. Ռուսիոյնեան էֆէնտին մասնաւորելով՝ մեր միտքն 'ի մասնաւորի անոր հետ խօսիլ չէ, քանի որ բոլոր անդամակիցները բնականապէս վերաքննութեան դործին մէջ իրարու համերաշխաւոր են, բայց Մեծ. տեղեկագրին անվրդով բնաւորութիւնը, անդրդուելի սկզբունքը, և մասնաւոր՝ տեսակ մը հայերէն լեզուի ունեցած յամառ նախասիրութիւնը (predilection) ճանչելով՝ աներկմիտ եմ՝ որ այս պարագաները մեծապէս ներդործած են խմբագրութեան դործին մէջ և Գեւ. Խորէնի և Մեծ. Իւթիւճեանի պէս դրիչներ մեկուսի քաշած են . . . :

Նոր Սահմանադրութեան ոճն ոչ միայն արդի աշխարհիկ դրական լեզուէն հեռի, այլ և ստէպ գրաբաւ ոճ մը խորթ և օտարոտի բառերու հետ՝ ֆրանսերէն դարձուածներու հետ հիւսւած է, այնպէս որ հայոց Օրինագիրը տրվելու տրամադիր հայուն առջև անակնկալ դժուարութիւններու պատուար մը կ'հանէ : Ինչպէս քանդել այս պատուարը, պէտք է նախ աշակերտել հեղինակին, իր լեզուն զաղտնեաց վերահասու լինիլ և ապա Սահմանադրութիւնը սերտել : Բայց այսպիսի աշակերտութեան ժամը չէ, Ուղղութեան սորվելու եղանակը չէ, այլ ընտել, պարզ, բառուկ ոճ մ'իսկոյն հասկնալ, Օրինագիրն առանց թարգմանի գործադրելու համար : Արդէն շատ հայեր սահմանադրական սկզբունքը, Օրինագրին նուրբ մասերը դժուարաւ կ'ըմբռնեն և հետեւապէս ուշ պիտի դործադրեն, թող թէ երբ այս ներ-

քին դժուարութեան արտաքին խրտնութիւններ ալ աւելնան :

Այս դիտողութիւններս հաստատելու համար բաւական է շատ մ'անբնիկ խնամով դործածւած բառերու և մութ դարձուածներու մէջէն մէկ քանին նօսը դրով նշանակել :

Եթէ փոքրիկ խոտորում մ'է Սահմանադրութեան խորիսը յայտնող բառն , այս է «*էլէքտ*» (ա) տեղ մ'այսպէս , և տեղ տեղ չալ «*էլէք*» և «*էլէքտր*» (յօդ. 73) գործածել , և երկու իրարմէ խիստ տարբեր խնասներ շիծթել , ինչպէս խելք և շունչ հասցնելու է դաւառաբնակ հայր թէ «*հայոց ժողովը . . . էլէքտրիկ*» զայս Սահմանադրութիւնը . . . զսէ՛ հաճո՛ւթեան Բ. Դրան և հայրախնամ վճռոյն իւր Օգոստոսիսու վեհապետին կայսերն Օսմանյուց (է) » : Եթէ օրէնքին ոճն անզարդ պարտի լինել , ինչ մտօք պէտք է առնուլ սա այլաբանական ձևը . . . «*Բարձ. Դրան հոգնաւոր զիտել . . . հաւասարի՛ծ ծառայել* (դ) » : Եթէ ռաւիկը միտակ Աստուծոյ կ'դոհանայ , ինչպէս կ'նշուի որ զարմանալի չգտնէ , եթէ «*Ս. Աստուծոյն արժանի փաստերէն չբռնանայ . . .*» երբ «*ժողովին էլ զիտել զիտելիք որ զանի վերջապէս կը լուծէ* (յ) » : Միւս կողմէն քանի որ հրաժարում , հրաժարական , հրաժեշտ բառերը միայն սորվեր է , հարկաւ բառաբանի պիտի դիմէ հրաժար նորերուի բառը փնտռելու , և չգիտէ՞նք՝ անոր մէջ սահմանադրական դաւ մը պէտք որ նշմարէ , թէ և պէտք որ , որն որ և ասոնց նման բառեր երանելի Գարապատումն յիշելով՝ պիտի հիանայ որ Սահմանադրութեան ոճն՝ ոչ զրաբառ որ աշխարհիկ է , այլ հինը նորին և երբեմն անդոյին հետ կարկըտուեր է :

Մանաւանդ՝ խեղճ վանցին ու մշեցին ինչ տարտափ պիտի ըզդան արդեօք՝ երբ Սահմանադրութեան զրեթէ ամէն երեսին մէջ շատ մը պէտք կարդան , իրենք որ ամէն օր Քիւրդ պետերու կամ պէկերու երեսն արխն կ'լան , ինչպէս ճանապարհ , խաղապէս , խորհրդապէս , արեւապէս և այլն , և պիտի յիշեն այն ասացուածը թէ՛ հայերը (իրենց երազին մէջ անշուշտ) եթէ տեղութիւն մ'ունենան , ամենքը պէտք լինելու պիտի կուտին և հարստակ չպիտի դառնի : Ասկից զատ՝ դրսեցի հայը՝ ենթադրելով որ ներսինը վարժ է , պիտի պարտաւորի քիչ շատ Փրանսերէնի հմտանալ , որպէս զի սապիսի խօսքեր «*Երեսփոխանը աղատ են քրէնին այս ցանկին վրայ ալ դարձել* (étendre) . . . որն որ ի

տես . . . (5) : Ընդհ. ժողովը՝ միակ դատաւոր սոյն դիպարտման (cas, ըսել կ'ուզէ պարագայ) կ'ընթերցէ (soutenir) . . . զամբաստանեալ մասնապետը (34) » կարող լինի ըմբռնելու : Գարձեալ սա խօսքերը . « Ընդհ. ժողովը կանխաւ կը հոգայ պակտող անդամին (35) փոխանակումը (échange, իմա remplacement) : Վախճանի կամ հրաշարի պարտաւոր (cas) մէջ պարզած խորհուրդ . . . պակտող անդամին փոխանակը (իմա յաջորդը) . . . Վարչութեան օրինական ընթացքը քննել (tracer), երեսփոխանաց անուններն ուղեւորել (dédier, իմա յայտարարել) . . . Կոնգրակով ժողովը (42-43) . . . » : Եթէ, կ'ըսեմ, ասոնք անբնիկ, մութ եւ օտարոտի դարձածներ են, Անճումէր ընկերութեան վրայ՝ պահպանուած ազգայնոց ֆրանսերէնի դաս տալու նոր պաշտօն մ'ալ կ'աւելնայ :

Վերջը չեմ առնուր եթէ ամէն նորաձեւութիւն նշանակեմ, սակայն իրաւունքնէն (79, équité) հեռացած կ'լինիմ, եթէ՝ միւս կողմէն՝ Սահմանադրութեան ընտիր դատակարարութիւնն ու՝ տեղ տեղ՝ ճշդ իրաւ լեզուն չդուլեմ : Կ'աւարտեմ մէջ բերած օրինակներս՝ հայկաբանութեան վարպետ՝ և իմ վաղեմի դասասու Գեր. Գաբ. Այվազովսքիին հետ ակնարկելով որ՝ ուսումնական, համաբնական, յարաբնական մասնախորհուրդ, մարտնչարար օրհրդաւորութիւն, բուն հայերէն չեն, այլ խանգարման հայերէնի, և թէ՛ աւելի ուղիղ կ'լինէր ըսել, կրթութեան, ելմոյց, յարաբերութեանց և այլն խորհուրդ, և հաւաստի եմ որ Մեծ. Ռուսիոյնան էֆէնստին չհամոզեցի, ըստ որում՝ իր համոզումէ զատ՝ ուրիշ համոզում չկայ իրեն համար :

Իրաւի արդի աշխարհիկ լեզուն շատ թերութիւններ ունի, սակայն՝ ենթադրելով անգամ որ նոր քերականին ոճն ու նորաձեւ խօսքերը զարգացում մ'են, դարձեալ այն թերութիւններն ուղղելու տեղը Սահմանադրութիւնը չէ : Ամէն ինչ կատարեալ և անփոփոխելիութեան պայմանաւ աղիքն տալու գրութիւնը չեմ ընդունիր, վասն զի այս գրութեան դառն փորձերն արդէն տեսանք : Ինչպէս օրէնքը ժողովրդեան հանդամանաց յարմարաւոր՝ նոյնպէս ոճն անոր յատուկ լեզուն համակերպել պէտք է, ըստ որում՝ մարդկային հիմնարկութիւններն ու օրէնքը՝ ինչպէս նաեւ լեզուն՝ ժամանակն ու լուսաւորութիւնը հասուն կ'զործեն :

Եթէ Մասիս և Օրաֆէր լուռ կեցան ցարդ այս մասին, այս լուռութիւնը հաւանութիւն չ'ենթադրեր, այլ օրինաւորութեան սկզբունք մը յարդելու գիտում մը, քանի որ իբր Սահմ. վերաբնիչ Յանձնակմբին անդամներ՝ կ'ալարաւորին անոր որոշման հետևութեան անմուռնչ հպատակիլ։

ՍՈՒՐԷՆ

ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ՆՇԱՆՏՈՒՓ ԶԿՍՅ

Պարոն, երկու տարիէ վեր կ'լսեմ որ Մահաւ անունով թերթ մը պիտի հրատարակես և դեռ բան մ'ըրած չունիս։ Ա'երեւի թէ Մահաւը ամուլ է, ինչպէս որ արդէն ըսին։ Եթէ գրելու նիւթ չունիս, ինչո՞ւ համար իզնէ չես խնդրեր, կամ հրամանադիրդ ինձի չես յանձներ։ Կապարձս սլաքներով լեցուն է, ալեղս լարւած կ'սպասեմ և ամէն ծուռ ու մուռ բանի գէմ' նետ մ'ունիմ' պատրաստ։ Ահա առաջինը քեզի կ'նետեմ, և, ինչպէս որ կ'ըսեն, եթէ այս օրերս լրացիրդ հանելու միայր ունիս, նայէ որ թեթև ըլլիս, ծանր ծանր յօդուածներ չլրես։ Ժողովուրդն անանկ հում հում բաներ չկրնար մարսել։ Եթէ շատ վերէն թռիս, կ'երազէ պիտի ըսեն, եթէ շատ վարէն քալես, անհամ պիտի կոչուիս, միջին ճամբայ մը բռնէ. անպաշար մի՛ լար, ստէպ ծիծաղէ Գիմսիբախն պէս. մարդիկ հիմա աւելի ծիծաղել կ'սիրեն քան թէ խորհիլ։ Եւ միթէ ծիծաղն ալ դաս մը չէ. տես Վ. Հիւկոն, Ժաք մը շինեց որ ամէն տեղ կ'ծիծաղէ, խօսելու, ուտելու, քնանալու, աղօթելու, լալու, մեռնելու տեսնն ալ կ'ծիծաղի. այս ծիծաղը կայծակ մ'է անիրաւ ու մոլի բաներու դէմ, աղաւ մ'է մարդկային ճակարկն վրայ. իսկ իր Լաբա-որն ալ կ'զգենու, հապա հպատակներն ինչո՞ւ համար լան...։ Ուրեմն խնդացուր ընթերցողդ, պարոն, և մեր չորս դին դանաճ պակասութիւններու մէջ ճարակի փնտռէ, փառք Աստուծոյ պաշարը մեծ է։ Գիտեն այս օրւան ծիծաղելի բանն ի՞նչ է. նշանաւորի հողը։ Քանի մ'առնեն վեր մեր տանտիկիւններն այս կարևոր խնդրը կ'ծաւմեն կ'ծամմեն և կուլ չեն կրնար տալ։ Հիները կ'յիշեն, նորերը չեն տեսներ, կամ չտեսնելու կ'զարնեն։

Անցած իրկուն տեղ մ'էի, ուր ութսունամեկի պառաւ մը քթախոտ քաշելով կ'ըսէր.

« Վայ գլխիս, աղջկիս պսակը չտեսած պիտի մեռնիմ. փա-

փառքներն փորս պիտի մնան . մեր Եկեղեցիներն ինչ խելքի կը ծառայեն չղիտեմ , հոռոմնոցը կ' թափին կ' թափթփին և մեր խելք աղջիկներուն աչք մը չունին : — Է՛հ , հիմա Սողոմ Գոմոր եղեր է աշխարհս , մարիկ , պատասխանեց քովինը . մեր ժամանակն ոտկի Բօքի պէս աղջիկներ տան չորսը չմտած կ' կարգւէին . այն ատեն չէն չնորհ կար . Աստուած կ' օրհնէր հարս ու փեսան . տարին յիսուն վաթսուն նշանտուք և հարսնիք կ' ըլլէր , հիմա Բէ+ Բոռ+ կ' լաւի , այն ալ աղքատներուն մէջ , և մեր սիրուն ու համեստ զաւակները տուները կ' մնան : Ասկի հայ աղջիկս , քանի մը տարիէն ձեռք պիտի հասնի . քահանաներն ալ ի՞նչպէս ապրին . հարսնիք չկայ , ծնունդ բնաւ , ժամը մարդ տեսած ունին . . . : — Ճշմարիտ է ըսածդ , հոգի , ընդմիջեց պառաւը՝ աչքերը դէպ ինձ նետելով , այնպէս որ , պատասխան տուր , եթէ կարող ես , ըսել կ' ուզէր : Սակայն ես մինակ չէի , օրիորդներ ալ կային նոյն ընկերութեան մէջ , որոնք զոյն կ' առնուին կ' ապրին և երկու պառաւներուն վայնասունէն շատ զոհ չէին երեւեր . ուստի ,

— Շատ կ' սխալիս , մարիկ , ըսի կամայով մը . մինակ դրքին մէկ երեսը կ' կարգաս , աղջիկդ ըսէ որ միւս երեսն ալ կարգա եթէ հազուէին սղեւէն զլուխ առնէ » : Այս կոշտ պատասխանիս վրայ պառաւ փոքնդսաց բարկութենէ ու անոր վրայ պաշտօնը ու քթախտ թափեց : Ես ալ լռեցի , կիներու հետ խօսիլ դժար է , միաքս գրի հեռուէն քարս նետել :

Գիտես ի՞նչ է պատճառն որ հայ երիտասարդները չեն կարգւիր , այս է , շատ տեղ Ֆլապալէ ու Կանդեմէ շինած պէպեթներ կ' տեսնեն քան թէ բուն կիներ : Այս պէպեթներուն պճնանէր հաճոյքը զոհ ընելու համար Բօչիլտի մը դանձերը չեն բաւեր : Անոնց նաժիշտ , հոյսկապ տուն , ձոխ կարասի , կառք , անդամանք , ամէն ամիս նոր հագուստ պէտք են , և սողաք ահ ու դողով կ' մտածեն որ իրենց դրամադուխը վրայ պիտի տան եթէ անոնց ծուղակն իյնան : Եւ որովհետեւ շատ հրապուրելի են անոնցմէ հեռու կ' կենան որ չլուսին : Եթէ պարզասիրութեան հետ քիչ մ' ալ անտեսութիւն սորովն աղջիկները , խնդիրը կ' փոխուի , և պառաւներն ալ դանդաղաբար առնիմ չեն ունենանք , իսկ հիմա ի՞նչպէս նշանելու յանդիման երիտասարդները , ի՞նչպէս . . . :

Ի Վ Ա Ն Օ Է

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Վիգի մ'ընտրութեան մասին քանի մը բարեկամներու հետ խօսելէն ետեւ, անոնցմէ մին սա բացաղանշութիւնն ըրաւ. «— Կ'երեակայեմ որ թարգմանելու համար է, է՛հ, նորէն Քաթմանսփի-ն) վէպ, միշտ վէպ, և երբէք հեղինակութիւն մը, այս ի՞նչ մտքի սով է:

— Եւ մեր աղբն երբ ունեցած է ընդ աղղային գրականութիւն մը, սլաւոսլան տաւ երկրորդ մը: Եւ եթէ 'ի նախնեաց քանի մ'ընտիր մատենաներ կան՝ որոց առջև մամ կ'վառենք, և 'ի նորումս քանի մ'անգղյն և խրթին քերթուածներ, կարկոտուն և ուռուցիկ վէպեր կան՝ զոր չենք կարգար, ասկից կ'ընանք հետեւեւթ թէ մենք ալ էապէս գրականութեան տէր ենք, 'ի բաց առեալ թարգմանութիւններն՝ որոց նիւթն ասեն մը կրօնական, այժմ միպական է, և ըստ իս, բուն գրականութիւն չեն համարիր, թէ և քիչ շատ ընթերցանութեան կ'գրգռեն և լեզուն կ'մշակեն:

— Լ'ընդունիմ, յարեցի ես ալ իմ կողմէս, որ՝ օտար գրականութեանց անհուն ուղիքներ առջև՝ մերինը մանր կաթիլներ են, սակայն ո՞վ կրնայ ուրանալ որ այս կաթիլներուն մէջ մարգարիտներ և ակներ կան՝ որ մեր ազգութեան ընակից են. մեզի համար շնաշխարհիկ, անման և անգին են մեր կրօնական հին երկերն. և թէ և համառօտ՝ մեր ազգային էութեան կենդանի և անկորնչելի արձաններ են մեր քանի մը պատմական երկերը: Իրաւ է որ, ինչպէս Յոյնք և Հռոմայեցիք, շունեցանք և չունինք տակաւին սյնալիսի գլուխներ որ մեզի ուղղակի իմաստասիրութեան, քաղաքականութեան, սյլ և սյլ գիտութեանց ու գեղարուեստից ճաշակ մը տան, սակայն հին Հայաստանն ի՞նչ, և այժմեանն ի՞նչ է որ անորմէ Հոմեր մը, Թալէս մը, Արիստոգէլ մը, Պլատոն մը, Ովրատիոս մը, Կիկերոն մը, Տակիտ մը յուսանք: Հինն իր կրակովը կը տապէր կ'եփէր, նորն՝ ինչպէս որ կ'ըսեն ռավիօրէն, իր եղովը կ'տապկի: Մեր նոխիւրն՝ այն ինչ իրենց երկնային փրկութեան հոգն ունենալով՝ հոգեւ շահ նիւթերով պարտապէս, և չըջակայ խուժիկ գրացիներէ անջատելով և արբեւելով՝ հոգի քան մարմին եղան. մեր արդի արեւնալիցներն ալ աստուղական ընկան լեռ ու ձոր, անցան գետ ու ծով՝ և օտար աշխարհներ՝ օտար օրիւնաց ներքէ տարաբեմ գաղթեցին և իրենց ապրուստին ետէն եղան: Արդ՝ եթէ աղբի մը գրականութիւնն նոյնին մտքի ու վիճակի, բարբի ու վարբի, ըղձի ու վշտի հայլին է, ո՛հ, քանի՛ հաւատարիմ է ուրեմն մեր հին և նոր գրականութեան հայլին. ներքին և արտաքին պատճառներ կ'ներգործեն անոք միայ և զայն՝ ինչպէս որ է՝ կ'ներկայեն մեզ:

— Երբեքնիդ ալ իբրարու համաժխտ էք, ըսաւ ուրիշ ունկնդիր մը, այս տարբերութեամբ որ անոնք վիշտ կ'յայտենն մեզ գրականութեան ամբողջութեան վրայ, դու այս ամբողջութենն կ'մեկնես, և ազգն անբասիր հանելով՝ պարագաները կը դատասպարուես:

Բարեկամս այս հաշտարար լեզուն՝ թէև զիս դո՛հ կ'ընէր, այլ խնդիրը չէր լուծեմ. ուստի որչափ որ խօսքս կտրեցի, մտովն ըսի,

Ա.

« Եւ Խնչպէս կարելի է որ հայ գրականութիւնն մեծաւ մասամբ այս օտարոտի կերպարանը չունենայ, Խնչպէս կարելի է որ յառաջագեմ ազգաց մտաւոր գանձերուն ետեւն չվազէ և ճարակ չվնտուէ, քանի որ ինքն իր բազմին և պարագայից անբը չլինելով՝ քաղաքական շրջանաւոր յեղաշրջումներու ենթարկելու, իր հնութեանց համբարները՝ քանի մը գրաւոր և անգիր նշխարներէ զատ՝ սյրեր քանդէր, մերթ Ասորի, մերթ Յոյն, մերթ Արապական աղբւրներու դիմեր է իր մատենագրութիւնն արգիւնաւորելու, քանի որ ներսէն վերգով ու շփով, նախարարական պառակտումներ, գրսէն յարձակումներ՝ զինքն անընդհատ՝ յուզման մեջ պահէր, և 'ի վերջէ հալածում կրելով՝ մերթ բուռն, մերթ կամաւոր զաղթականութեան մէջ դիպչու հանգիստ է գտեր:

Միթէ այսպիսի ազդ մը կարող էր իր ազգային կեանքը մշակել, մնայուն քաղաքական դիրք մը պահել, առանին հաստատութիւններն ու օրէնքը ամրապնդել, բարձր ու վարժը անեղծ պահել, և խաղաղութեան պտուղները վայելել, որ միակ շուտի մ'է մոային և բարոյական զարգացման. հարկաւ ոչ, հարկաւ շատ անգամ ուրիշին կամքով պիտի դործէր, ուրիշին աչքով պիտի տեսնէր և դատէր, ուրիշին սրտով պիտի զգար, և միշտ իր անկայուն և վտարանդի էութեան պէս՝ գրականութիւնն ալ անկայուն և բազմադիմի պիտի դառնար:

Արդ՝ զարմանք չեն՝ եթէ մեր աշխարհիկ գրականութիւնն ալ՝ մեր արդի լեզուն պէս այլազան՝ եւրոպականին և մանաւանդ ֆրանսերէնին դրոշմը կ'երբէ իր մէջ: Ի՞նչպէս հնար էր որ Հայազգին ալ չկրէր այն գերադոյն մոային և բարոյական ներդործութիւնն՝ որով Ֆրանսա նոյն իսկ կտրովմարտ և հզօր ազգաց վրայ կ'իշխէր: Այս իշխանութիւնն՝ եթէ մասամբ՝ իր քաղաքական կացութեան՝ ևս առաւել՝ իր ընկերատէր, հպելի բնաւորութեան, պայծառ և փայլուն հանճարին, և մանաւանդ յստակ՝ ճշգրիտ, պայծառ և հրապուրելի լեզուն՝ չ'պարտաւորէր:

Երբ ասկից քսան երեուն տարի առաջ՝ Թուրքիոյ ժողովուրդը քիչ մ'աչքը բանալով՝ Հոսթիւսի մարգինները շատ սուղ, և միանգամայն թաղուն ճուղակներ դուռ, քանի մը քննել առաւ, կռնակը Միսիթարեան վանուց դարձուց և Բարիզէն կրթութիւն ստուեց: Առ հասարակ մեծ ու ազգիկ՝ բարիզեան կեանքը, սովորոյթը, նորաձեւութիւնը, մատենագիւրներն օրինակել սկսան: Այն ատեն ոչ միայն մեր արդն ու զարգը, տարազն ու կահոյքը Ֆրանսանէ եկան, այլ և Ֆրանսան տաւ մեզ մտքի սնունդ, սրտի զգացում, նոյնպէս մեր կրից ճարակ և կ'իօսել, կ'իտրհէ, Ֆրանսերէն կ'ըսէ, կ'պարէ, կ'կենակցի, կ'գրէ, և շատ անգամ՝ Ֆրանսայի ընտիր ձեռքերն անտես առնելով՝ ընկ անոր սնտոյի, անշահ և վատ իբրեւով կ'մտնէ ու կ'մտրի:

Այս յեղափոխութեան առ հարկի մեր գրականութիւնն ալ պիտի հաղորդ

գտնւեր, և ի՞նչ արդիւնք պիտի դոյանար յայտնի է: Գեղեցիկը տղեղին, լաւ
 ւը յոռիին, օգտակարը վնասակարին հետ մեր ազգային կենաց մէջ մուտ պիտի
 ունենար անխորի, և աչդն իր բնիկ յատկութիւններէ փոքր առ փոքր պիտի
 հեռանար: Նա մանաւանդ՝ քանի որ օրինակել, հետեւել, թարգմանել հեշ-
 տին էր, մտածելու, ստեղծելու, հեղինակելու հոգ ու ճիգ ընդդէմը՝ բացա-
 ռիկ պարագայի և վիճակի մէջ գտնուող՝ շատ քիչ անձեր պիտի լինէին:

Բ.

Միտքս դատաւարտել չէ՝ օտար ազգերու ընտիր մտաց բերքը. ոչ: Ամե-
 նուն յայտնի է թէ որ և է ժողովրդեան մը գրականութիւնն ինքնին չծաղիր,
 մանաւանդ չգարգանար. շատ անգամ՝ օտարամուտ սկիզբ մը կամ տարր մը
 կ'ունենայ, սակայն հարկ է որ այս տարրն աննշմարելի դառնայ բնատալ հան-
 գամանօք:

Հին Յունաստան Փիւնիկէէն և Եգիպտոսէն փոխ կ'առնու իր սյուսբէնն, իր
 դիքն, իր կրթութիւնը, բայց իր վառվռուն, ճարտար և հիանալի երեա-
 կայութեամբն ինչպէս իր յատուկ դրոշմն անոնց կ'կոխէ: Հռոմ՝ Յունաստանի
 աշակերտը՝ չչատանար, Հռմբ, Թիւրքիտիսէս, Քսէնոֆոն կարդալով ու թարգ-
 մանելով, ինքն ալ Վիրգիլիոսներ, Ովրտաիոսներ, Պլիններ, Տակիտոսներ
 կ'ստեղծէ և իր օղին բնիկ գրականութեան կ'հաղորդէ: Սոյնպէս վերջէն
 Խաալիա բոլոր հիւսիսային ազգերու նոր մտային մշտմ մը տալովը՝ Ֆրանսա,
 Անկլիա, Գերմանիա կուրօրէն անոր չհետեւեցան, իրենց ազգային հանճարը
 չկորուսին, նա մանաւանդ անդրադարձ ներգործեցին իրենց դրացիներուն վրայ,
 ինչպէս որ եւրոպական գրականութեան փոքր 'ի շատէ հմուտ լինողը կրնայ
 վկայել: Ուրեմն եւրոպական ազգերու գրականութիւնն իրարմով կ'ործեն ու
 կ'զարգանան, առանց իւրաքանչիւրն իր ազգային ոճը, ձևը, ողին ու հակումը
 սլակեկրպելու: Երկար կ'լինի նշանակել աստանօր թէ ինչպէս մէն մի ազգ
 իր յատուկ հանճարներուն միջոցաւ նշանաւոր յեղաշրջումներ պատճառեց ոչ
 միայն իր, այլ և օտար երկիրներու մէջ՝ և ինչպէս իմաստասիրութեան, պատ-
 մութեան, երաժշտութեան, ճարտարապետութեան, նոյնպէս գրականութեան
 նոր թուական, նոր դպրոց, նոր ուղղութիւն բացաւ:

Գ.

Երանի թէ Հայերն ալ զգային թէ սրչափ սքանչելի լինի օտարին գործը,
 որչափ դիւրին լինի զայն 'ի հայ շրջել, դարձեալ անհարազատ ծնունդ մը
 կ'համարուի, և չորտունակեր այն տոհմային հանգամանքն որով ազգի մը բուն
 մատենագրութիւնը կ'կաղմբի: Օտարէն առնուլն ինչ որ դիտութեանց և ար-
 հեստից տահմանին մէջ է, օտարէն առնուլն ինչ որ գարեւ անբաւ ճիգ ու
 քիչտ թափելով ձեռք ձգուած է և դիւրագին, օտարէն քաղելն այն հանրա-
 կան ճշմարտութիւններն՝ որ բոլոր մարդկային սեռի սեպհականութիւններ են՝
 բնաւ մեղադրելի, վնասակար և անբնական գործ մը չէ, քանի որ մտային վա-
 ճաքը՝ փառք տալագրութեան և ազատութեան՝ արգելական օրինաց ներքեւ
 չեն գտնուիր, սակայն երբ ազգ մ'իւր եութիւնը կաղմող կենսական տարրները
 պահպանել կամենայ, պարտաւոր է նոյնին մէջ փնտռել պահպանութեան
 միջոցները, իր ազգային գրողմով կերել իր ամէն մտային և բարոյական ստա-
 ցումները, ապա թէ ոչ կապիլ կամ թութակի ընթացք մը բռնած, քմածին
 ճաշակով ամէն նոր բանի հետեւած, և ազգին կենսատու ոկղբունքն 'ի սպառ-
 ճնջած կ'լինի:

Ինչ մի թէ կ'պակսի՞ն մեղ ներքին նիւթեր, հին և նոր արկածներ, տեսաբաններ՝ որպէս զի անոնց վրայ հիմնենք մեր հեղինակութիւնները: Մի թէ բանահիւսին համար օդ, երկին, աւերակ և դերեզման, ողբ և արտասուք չկան Հայաստանի մէջ, մի թէ ազգային երգիչներու համար սէր, ազատութիւն, խաղաղ ու եռանդ անհետ եղան, մի թէ իմաստասիրին համար հին պատմութիւնն ու մեր արդի թշուառութեան պատճառները լեզու մը չունին, մի թէ վիպագրին համար սրտաշարժ հառաչներ, անասելի ցաւեր, եղերական իրողութիւններ ձայն մը չունին, այո՛, ունին, և զգայուն ու բանիմաստ գրագետ մը բաւական է որ կամք ունենայ, և իսկոյն ամէն իրողութիւն մարմին մը, ամէն մարմին շունչ, ամէն շունչ խորհուրդ մը կ'առնու իր գրչին ներքէ:

Ուրեմն ո՞ր է հայ Պերանժէն, հայ Պայրն, հայ Կեօթէն, հայ Հիւզօն, հայ Էօփէն—Սիւն և այլն: Բայց, աւաղ, ո՞վ պիտի սնուցանէ, քաջալերէ, մեծարէ նորածին կամ թաղուն հայ քերթողը, վիպասանը, իմաստասերը, լծաւառութեան, քորկութեան և բռնութեան հողին վրայ. ո՞վ պիտի կերակրէ, պաշտպանէ ազատէ Արեւման մ'որ Հայաստանի վերջ ցոյց տալու և ողբալու ատենը՝ անտեսանելի ձեռքէ յանդունդ կ'զրդի, Նաբաւեանց մ'որ սաղիզ ճանապարհը յայտնելուն՝ արծիւին ճիւղին տակ կ'ճնշի և ապագային գոչ չելով հոգին կ'փչէ, Պատկանեան մ'որ փլած սրտերու հայրենասիրութեան թերերը կ'ծնդէ, այլ վարագուրի մ'ետեւն, Շանշեանց մ'որ թէև Քրիստոսի խաչն իբր ազատութեան և փրկութեան գրող կ'պարզէ հայոց, սուտ կրօնաւորներէ կ'հալածէ, Ոսկանեան մ'որ՝ թէև մտային և գրական յեղաշրջում մը կ'որոշմարտէր գործելու, բայց անհասկանալի կ'մնայ, Նարայեան մ'որ անշուշտ Տէր Ժառնի հեղինակին պիտի նմանէ թէ՛ վեղար չունենար, Պէշէկիթալեան մ'որ հայ Պերանժէն մ'էր, և իր հոգւոյն գանձերը հազիւ թէ քանի մ'ընտիր բարեկամաց յայտնելու կ'իշխէ: . . . Հիսարեան մ'որ մեր արդի ընկերական տիպարը կ'նկերկայէ իր խաղաղ ու Մարտահայ մէջ՝ և խախտ չընդունիր, Պրօշեանց մ'որ իր Սօս ու Վարդէիէր ազգային վէպին մէջ՝ պարզ ու դողդաղ ոճով Աշտարակի հայոց նախնի կեանքն ու սովորութիւնները կ'նկարագրէ, բայց հետեւող չունենար: . . . Այո՛, կան, և թերեւ շատ կան այնպիսի գլուխներ որ թիւ առնու համար ազատութեան օգ և դիւրակեցութիւն կ'ենդրեն, և այս օգն ու դիւրակեցութիւնը պակսելով՝ անտես և անյայտ կ'հեծեն, կ'տառաւային և կ'մարին: . . .

Գ:

Այս իրաւ է որ ռուսաբնակ հայերը՝ ի բաց առեալ իրենց անհեթեթ և խորթ շարագրութեան ձևը՝ կ'նկրաին ազգային նոր գպրութիւն մը ստեղծել: Ի՞նչ է այս օգուտէս ձգտման բնապատճառը վնասներ՝ չպիտի գտնենք թարգմանութեանց շատութեան, լրագրաց առատութեան մէջ՝ այլ իրենց աւանդապահ բնաւորութեան, տոհմային բարուց և վարուց, դաստիարակութեան և Հայաստանի մօտաւորութեան մէջ: Ծանր լծի մը ներքէ՝ մարդիկ ստեպ կրօնից, ազգային հոգիներից և աւերակաց մէջ ապոււն վնասելով՝ փոփոխում և ներքին ազատութիւն մը կ'գտնեն: Կոմկասու հայն ալ, կ'իմանամ բարեկերթի իր սաճարին, իր խաչին, իր եկեղեցւոյն մէջ կ'որոնէ փրկութիւն մը, Սիւնեքիոյ առնամանեաց դէմ պատուար մը, ըստ մեծի մասին գերմանական դրակաֆութեամբ—որ բան կալիական հատատուն, խորիմաստ, հայկական բնութեան վնասողիցն է, թէև ստեպ ճապաղ—կ'ներնչէի, համալսարաններ կ'յաճախէ,

իր հարց գերեզմաններուն փոշին և ոսկորտիքը կ'խառնէ, անոնց տեւքովը կը վառուի, իր հայրենակիցներուն կեանքովը կ'ապրի և 'ի վերջէ՝ իր մտաց արգիւնքը՝ եթէ երբէք 'ի լոյս հանէ՝ ոչ այս ոչ այն ազգին դրականութեան ընդօրինակութիւն կամ հետեւութիւնն է, այլ լոկ իր հանճարին ծնունդը, իր աղագային եռութեան մասը, վերջապէս նոյն ինքն է և չէ թէ օտարական մը։ Միայն կարող ես նկատել որ՝ իր գործին նիւթը, հիւստածքն ու ոգին թէեւ հայկական, կիրթ ճաշակ մը, աննշմարելի արհեստ մը, բանիլրուն գրիչ մը տնօրիներ, յարգարեք է անոր յատկապէսն ու ոճը, և անոր պարզութեան մէջ կ'նշմարեա ընտիր խմայականութեան մը հայկական տիպարը։ Վկայ են մեր ասու-
թեան Սօս և Վարդիւթէր, Պէշկիթաշեանի, Սպեաթի և Պատկանեանի երգերը։

Մեր կողմերն ալ ոմանք փորձ փորձեցին և կ'փորձեն զուտ ազգային վէպեր յօրինել։ Այս եռանդը զովելի է, սակայն՝ 'ի բաց առեալ հին լեզուով գրուած դիցապահական քերթութեանցը՝ թէ արձակ, թէ ոտամաւոր, ըստ մեծի մասին թերի են և կցկտուր։ Նոյն իսկ Միխիթարեան հարց դրածները՝ որոց տեսարանն է հին պատմութիւնը, ստեպ ճոխ, հմուտից, այլ պաշ և անի են, ըստ որում իրենց վանական մեծութեան մէջ՝ ազգային գործնական կեանքէն հեռի, և բարուց անհաղորդ գոնելով՝ չեն կարող՝ որչափ հմուտ, գիտուն և վեհմ լինին, կրօնական սահմանէն դուրս ելնել, և ժողովրդեան սիրտն ու միտքը յուզող, գրաւող երկասիրութիւն մ'արտադրել։ Վ'դունին նաև քանի մը նորատիպ վէպեր՝ որ դժբաղդօրէն թէ նիւթի և թէ ոճի կողմէ չեն կրնար նոր արգիւնաւատ ուղղութիւն մը տալ մեր արգի գրականութեան։ Սակայն այս գիտողութիւններն ընելով հանդերձ, կ'իրկնեմ նաև թէ՝ քանի որ տակաւին աներևոյթ են մեր մէջ այնպիսի հանճարներ որ՝ մեր աշխարհիկ լեզուին հիմնական կայան մը տալէն զատ՝ նոր նոր ինքնածին երկերով ազգը ճոխացնեն, մեզի պէս գրչակներ կ'ստիպեն թարգմանութիւններու ձեռնարկել։ . . . Վասն զի, ինչպէս որ կ'ըսէ Վ. Դեմիւլ, այն որ միշտ կ'թարգմանէ, երբէք բանաստեղծ չլինիր, ոչ օրինակողը պատկերհաս մը, ոչ փամփուշտով լողացողը լուզողը մը . . . :

Ե.

Բայց միթէ թարգմանութեան մէջ ալ կարելի չէ՞ ընտրութիւն մ'ընել, միթէ յարմար կամ անյարմար ինչ որ մեր առջեւ ելնէ թարգմանելով՝ հասարակութեան միտքը չ'փնտրի։ Միթէ չկա՞ն բարեկիրթ ազգեր որոց վէպերը մեր ազգին կացութեան, ոգւոյն աւելի պատկանին։ Ի հարկէ ամեն ազգի մէջ կան, և կ'մնայ միայն շատ մը յոռի, փուռն նիւթեր դուրս ձգելով՝ լուսածնին սէր, միայն բուռն կիբը, միայն սնտուի պատրուք և խաղ կ'փնտռէ՝ շրջմով լուսի մ'եռունէն վազող ուղեւորին կ'նմանի, որ 'ի վերջէ յանդուժ կը զլւրի։ Այսպիսի վէպեր իր նախնի պարզութիւնն ու բարոյական ոյժը պահող ժողովրդեան մը համար փնտաւեր են։ Մեզի յարմարագոյն կ'թուի այն վիպական պատմութիւններն՝ որ հռչակաւոր հեղինակներու գործ լինելէ զատ՝ մեր վիճակին, մեր կենաց գէթ անուղղակի նկարագիրն ընծայեն և 'ի լուս անդր գիմելու մեզ զրդիւ և հրապոյր տան։

Քանի որ արդէն հայ ականջներ Գրանսայի անմահ և մերթ անշահ վիպասաններու դործերով լցած են, քանի որ արդէն մեր միտքն ու սիրտը բաւական անան և մոլեցան, երբեմն գեղեցիկ խմաստներով՝ ստեպ սիրայօր անապառ զրոյցներով՝ քանի որ Ա. Տիւմա, Վ. Հիւգօ, Է. Սիւ, Լ'Ապպէ . . . քիչ չա-

Հայացան և իրենց հնարագէտ, վեհ, նուրբ, ազատական հանձարին ճաշակը մեղաւին, թէև ուրիշ քանի մը կալլիացի վիպասաններ՝ իրենց ոճին հետ՝ ընդածին յատկութիւնն ալ կորուսելով՝ Պայքնի ըսածին պէս՝ չէ թէ Բարբառնէալ այլ ծղրեալ կամ այլակերպ ներկայացան մեզ, ուստի հանդիսիս մեջ հետզհետէ տուելու միտք, արժան դատեցի այս անդամ ալ մերադնեից շատերուն անուշով ծանօթ, այլ դործով անձանօթ վիպասան մը թարգմանել, այս է Վօլթըր Սքօթ:

Վօլթըր Սքօթ (1771—1832) լըրտ Պայքնի ժամանակակից՝ նախ՝ իբր ըանահիւս, ապա իբր վիպասան իր անունովը բոլոր Եւրոպա լըուց, իր հնազեալ և բեղմնաւոր երեակայութեամբ ամէնքը հիացուց, և իր նախորդներուն հետեւած զուտ սիրավիպային շաւիղն անգոսնելով՝ նշանաւոր յեղափոխութիւն մը գործեց և սլատմական վիպասանութեան դուռը բացաւ: Կարագրական տեւաակին մէջ մանաւանդ կ'տեսնուի իր հանձարին զօրութիւնը: Իր հայրենի երկրին՝ Սկոթլանդի՝ և Անկլիոյ հնութեանց ներհուն՝ մանրադէնին դըրով և կենդանի լեզուով կ'սլատմէ նախնեաց բարբը վարբը, կենցաղը՝ արձաններն ու լէնքերը, անասուններն ու անառիկ դղեակները կ'նկարագրէ, և կարծես թէ հմայութեամբ մը մոռեցնէրու շունչ, բարբառ, շարժում կ'հաղորդէ՝ միշտ ժողովրդեան իրաւանց սլաշտպան՝ և բռնակալութեան անհաշտ թշնամի կանգնելով: Պատմական վիպասանութեան իբր հնարիչ՝ Վօլթըր Սքօթ նմանը չունի, թէև շատեր իրեն հետեւեցան, ինչպէս Գուք յԱմերիկայ, Տիւմա 'ի Ֆրանսայ, Կրաման յԱնկլիա և այլն:

Վօլթըր Սքօթի բազմաթիւ վէպերէն ընտրեցի Իվ Անօն, իր հրաշակերտը: Իվանօն՝ վէպին գիւցաղն՝ միջին դարու մէջ կ'ապրի, խաւարին, այլանդակ, ահարկու դար մ'ուր սուրն ու խորոյիլ մէկ կողմէ հերետիկոսներ կ'ընկնէ կ'այրեն՝ իբր վճուկներ, ասպետական արիութիւնն ու վեհանձնութիւնը միւս կողմէն բռնակալները կ'սարսեն: Իվանօն՝ ընիկ Անկլո—Սքոթսօն, անհաշտ թշնամութիւն մը կ'ուխտէ հայրենեաց բռնաւոր Կորմաններուն դէմ, որոց պետը՝ յաղթողն Վիլլիամ, Անկլիան իր նախարարաց մէջ բաժներ էր, ինչպէս Արշակ Պարթեւը՝ Հայաստանը: Այս Կորմաններն՝ իբր անբան ստրուկ կ'հարստահարէին, կ'հալածէին ժողովուրդը: Սպառազէն ասպետներ, նրբամիտ մոլի կրօնականներ, բռնասէր թաղաւորներ և իշխաններ, ազատասէր Սքոթսօն տանտէրներ, անվահէր և առաքինի կիներ իրենց յատուկ յատուկ զգեստով և զարդերով կ'երևին այս վէպին մէջ՝ կ'սպքարին, և 'ի վերջէ յաղթանակն արգարին և արիին կ'մնայ:

Թէև այսպիսի վէպ մ'անկլիական բնագրէն 'ի հայ փոխել զժուարին՝ ոչ այնչափ կարողութեանս, որչափ ուշիմ ընթերցողաց ներողամտութեան վստահելով՝ անոր ձեռն արկի, և յուսամ որ այն ներողամտութիւնը չարաչար չեմ գործածեր:

3 Յունվար, 1871

Չ. ԲԻԼԻՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՎՈՂԹԻ ՍԻՐՈԹ

Ի Վ Ա Ն Օ Է

(IVANHOE)

ԳԼՈՒԽ Ա.

Այսպէս խօսէին. մինչ գէպ 'ի ստորն բակ՝
Լորէկոյեան դէմ՝ խոզըն պարարակ՝
Դառնար ակամայ՝ հանդիւի 'ի խշտիս,
Անշահ հանելով՝ խանչիւն ահուկիս:

ՈՒՒՍԱԳԱՆ

Հին աստիճանները զուարթուն Անկլիոյ այն ակորժեւի նա-
հանդին մէջ որ Տօն զետուլ կ'ոռոզւի՝ անտառ մը կար ընդ-
արձակ որ Շէֆֆիլտի և Տօնդաստրի զեղաղուարձ քաղքին մէջ
տեղ զանառդ աղտոր բլուրներն ու հովիտները կ'ծածկէր: Սոյն
անտառին մէկ քանի մասերը դեռ ևս կ'տեսնուին Վէնդլօրթի,
Վարնդլիֆ ծառաստանի և Ռօթրհէմի կողմերը: Ահա այս տեղ
կ'ընկալուէր երբեմն Վօնալէի վիսպական վիշապը, այս տեղ
մղեցյան երկու Վարդից ըսած քաղաքացին պատերազմաց ժա-
մանակ շատ մ'ահեղ կռիւներ, նոյնպէս այս տեղ կ'ծաղկէին
'ի հնումն այն զուռդ զուռդ արի վտարակներն (outlaws) որոց
նախնիներն անկլիական ժողովրդեան երգերու մէջ հռչակ առին:

Մեր վէպին գլխաւոր տեսարանն այս վայրս լինելով՝ անոր թուականը Ա. Ռիչարտի* իշխանութեան վախճանին կ'հասնի : Այս թաղաւորին երկարատեւ ստորկութեան ատեն՝ իր հայրենի աշխարհը վերադարձը աւելի փափաքելի քան յուսալի իրողութիւն մ'էր իր յուսակաւոր հպատակաց համար, որ նոյն պահուն պէս պէս բռնութեան ներքեւ կ'ճնշէին : Ազնուականք՝ որոյ զօրութիւնը Ստեփըն թաղաւորին օրովը սաստկացեր էր՝ և հազիւ թէ Հէնրի Բ. ին խոհականութեամբն արքունի թագին հպատակելու միտեր էին, նորէն իրենց հին անզուսպ բռնութիւնը ձեռք աւեր, Անկլիոյ Պետական խորհրդին տկար միջամտութիւնը քամահեր՝ և իրենց ամբողջները զօրացնելով, արբանեկաց խումբը ստուարելով՝ ամէն ճիւղները ստրուկներու կարգն անցնելու կ'նկրտէին. միանգամայն ամէն ճիւղ կ'ընդհատէր զօրագնացներ պատրաստել՝ որպէս զի ի հարկին անոնց գլուխն անցնելով՝ կարող լինին ազգային մօտալուտ փոթորիկներու մէջ մեծ դեր մը խաղալ :

Այն ատեն՝ Քրէնքլինս կոչւած ստորին կարգի մարդկան վիշախն՝ որոնք Անկլիոյ Սահմանադրութեան ոգւոյն համեմատ՝ աւատական բռնութենէ զերծ մնալու իրաւունք ունէին՝ անսովոր վտանգի մէջ կ'գտնէր : Եթէ, ինչպէս որ առ հասարակ կ'սպասուէր՝ այս դասու մարդիկ՝ իրենց մօտաւոր փոքրիկ թաղաւորներու մէկուն պաշտպանութեան ներքեւ մննէին, անոր տան մէջ պաշտօն վարէին՝ կամ բարեկամութեան փոխադարձ դաշամբ կապելով՝ անոր օգնական դառնելու խօսք տային, կարելի է որ այն ատեն ժամանակաւոր հանդիստ մը վայելէին. բայց այս անգործութիւնը ստանալու համար՝ ամէն անկլիացոյ սրտին սրաշտելի ազատութիւն մը զոհ ընել և պաշտպան սկտին՝ փառասիրութենէ ձեռնարկած՝ ամէն յանդուգն արշաւանաց աջակից դառնիլ հարկ էր : Միւս կողմէն մեծ Պարսններն այնքան բազմադիմի միջոցներ ունէին ժողովուրդը կեղեքելու և ճնշելու, որ միշտ պատրուակ և կամք չէին պակսեր իրենց՝ ընտանեկան շահի՝ ներել և հալածել տկարագոյն դրացիներ՝ որոնք թերեւս՝ սկտներու իշխանութենէ ազատելու փորձ փորձելով՝ կ'փափաքէին

* Ընդհանուր ընթերցողին վէպիս պատմական մասերն աւելի գիւրբնբոսն են ի բերելու համար՝ կ'առաջագրեմ՝ յաջորդ թիւով՝ Բրիտանիոյ պատմութեան խիստ համառօտ մէկ նկարագիրն ընել :

իրենց անվաս վարձուներին և երկրին օրինաց մէջ պաշտպանութիւն փնտռել վտանգալից ատեններ :

Ազնուականաց բունութիւնն և ստորին մարդոց ստուապանքն աւելցնող պարագայ մը եթէ կար՝ մանաւանդ Նորմանտիոյ դուքս Վիլլէմի աշխարհակալութեան արդիւնքն էր : Չորս դարեր բաւական չէին եղեր Նորմաններուն և Անկլո-Սաքսոններու անհաշտ արիւնն իրարու հետ խառնել, կամ, լեզւի նոյնութեամբ և փոխադարձ շահերով երկու անհաշտելի ցեղեր միաւորել, քանի որ ասոնց մին իբր յաղթող ժողովուրդ տակաւին կ'իրոխտար, մինչդեռ միւսն իր սրբաբնութեան հետեանքը հեծեծելով կ'տանէր : Հէտլինքսի ճակատամարտէն ետքն երկրին իշխանութիւնը լիովին նորմաններու ձեռք անցաւ, և ինչպէս որ պատմութիւնը կ'հաստատէ, յաղթականներն այս իշխանութիւնն անխնայ 'ի զօրծ դրին : Սաքսոնեան տոհմին բոլոր իշխաններն ու աւագանին անհետ եղան կամ հողազուրկ, քանի մը բացառութեամբ : Բնիկներուն մէջ աննշան հող ու կալուած ունեցողները շատ քիչ էրին : Արքայական քաղաքականութիւնն ամէն օրինական և սպորէն միջոցներով կ'աշխատէր 'ի վաղուց ջլատել բնիկ ժողովրդեան այն մասն որ իբաւամբ ոխերիմ հակակրօթիւն ունէին բռնակալին դէմ : Նորմանեան ցեղին ամէն թագաւորներն ակն յայտնի իրենց Նորման հպատակները միայն կ'սիրէին : Որսորդական օրէնքներ և սաքսոնեան Սահմանադրութեան անուշ և սղաւտ ողւոյն անձանթ ուրիշ շատ մը կանոններ նկատն բնակիչներուն գլխուն վրայ դրին՝ որպէս թէ աւելի ևս ամրապնդեն այն աւատական շղթաներն որով կաշկանդէր էին : Արքունի պալատն ու երեւելի ազնուականաց գղեակներն՝ ուր արքայական շուք ու հանդէս կ'պարգէին, լոկ Ֆրանքօ-Նորման լեզուն կ'խօսէին. դատարանները մի և նոյն լեզուով դատ ու վճիռ կ'արձակէին : Համառօտ՝ պատույ, ասպետութեան և նոյն իսկ արդարութեան լեզուն Ֆրանսերէն լեզուն էր, մինչդեռ անկլո-սաքսոնեան առանի և ազգու բարբառը գեղջուկներու և շինականներու բերնին յարմար լեզու կ'դատէր, և ասոնք ալ ուրիշ լեզու չգիտէին : Սակայն դարձեալ լօրտերն ու մշակներն՝ որ իբր անբան երկիրը կ'մշակէին՝ իրարու հետ առ հարկի յարաբերութեան մէջ գտնուելով՝ հետզհետէ նոր բարբառ մը շինելու հետ էին, որ կէս

Ֆրանսերէն և կէս անկլօ-սաքսօն լեզու մ'էր, և այս կերպով իրարու միտք կ'հասկնային : Այսպէս քիչ քիչ կերպարան առաւ մեր անկլիսական լեզուն, որուն մէջ յաղթողներուն և յաղթեալներուն բարբառն վայելչութեամբ մ'իրարու հետ խառնուեցան, և այնուհետեւ զասական ու Եւրոպիոյ հարաւային երկիրներու լեզուներէն նոր նոր բառեր փոխ առնուելով շատ ծաղկեցաւ :

Ընթերցողին ընդհանուր ծանօթութիւն մը տալու համար այս պատմական իրողութիւնները պատմել յարմար գտնեցի. վասն զի կարելի է կ'մտնայ թէ՛ որչափ որ պատմային նշանաւոր գէպք մը, ինչպէս սրատերազմ կամ յեղափոխութիւն՝ չցուցնէր թէ Բ․ Ալիլլէմի իշխանութենէ ետքը՝ անկլօ-սաքսօնեան ազգը՝ իբր զատ ժողովուրդ մը սեպւին, սակայն իրենց և բռնակալներու մէջ տիրած ազգային խտրութիւնները, իրենց նախնի անկախ կացութեան և արդի ստրկութեան յիշատակը՝ մինչև Լոսվարտ Գ․ին օրովը կ'յարատեւէին, այնպէս որ բռնակալութեան բրած վէրքերը միշտ անբուժելի կ'մնային, և յաղթող հօրմաններու տերունդը յաղթեալ Սաքսօններէն 'ի սպառ կ'բաժուէր :

Այս գլխին սկիզբը յիշած անտառին ճոխ դալարի ցանցառին (glade) վրայ արդէն արեւը կ'իջնէր : Հարիւրաւոր լայնկատար, հաստակոճղ, ուռճալի կաղնիներն՝ որոնք թերեւ հռոմէական զօրաց սրանձալի հանդէսը տեսեր էին, իրենց հոծ ճիւղերը զմայելի դալարավայրի մը խիտ գորգին վրայ կ'տարածէին : Տեղ տեղ փշալի գափնիներ (holly), մրտենիներ և փեկոններ՝ իրարու բոլորեալ՝ մարը մանող արփիին ճառագայթները կ'խափանէին. տեղ տեղ ալ՝ իրարմէ անջատելով սփիւռ ծառուղիներ կ'յօրինէին, որոց շփոթ հեռանկարին հրճուանօք կ'նայի մարդուս աչքը, մինչդեռ երեւակայութիւնը զանոնք իբր անտառային մեղմութեան աւելի ամայի տեսարաններու տանող շաւիղներ կ'նկատէ : Աստ՝ արեւուն կարմիր նշոյլները ցիր ու նսեմ լոյս մը կ'արձակեն և ծառերու բեկեալ ոստերուն և լօռուտ կոճղերուն վրայ ըստ մասին կ'սփռին, անդ՝ շողուն շառաւիղներով կ'լուսաւորեն դալարին այն մասերն ուր կ'ձգտին :

Ցանցառին միջևն՝ ահաղին բաց վայր մը կար որ կ'երեւի թէ քրմական ծէսերու նուիրած ատրուշան մ'էր. վասն զի բլրակին

կատարն՝ որ հարթութենէն արհեստական կ'ընեն՝ տակաւին անտաշ խոշոր քարերու բոլորակ մը կ'դնանէր։ Այս քարերէն եօթը կանդուն էին, միւսները՝ թերեւս նորադարձ և եռանկուն խաչապաշտի մը ձեռք իրենց տեղէն խախտեր, մէկ քանին անշարժ մնացեր և մէկ քանին ալ բլրակին մէկ կողմը լծաւալեր էին։ Այն վէժ մը միայն մնաց և վար զլորեր՝ և բլրին բոլորը մեղմիկ հոսող վտակի մ'ընթացքը կտրելով՝ թեթև կարկաչ մը հանելու առիթ տւեր էր այն յստակ և այլուր լռիկ վտակին։

Այս դաշտային տեսարանին վրայ լոկ երկու մարդիկ կ'տեսնուէին. երկուքն ալ հազուադուր և տեսքով հին Եօթըջարի մօտ Վէստ-Ռայտինի թաւուտ երկիրներուն կողմ և դեղջուկ բնիկներուն կ'նմանէին։ Երկրպագոյնը՝ միջին, վայրենի և ժանտ տեսք մ'ունէր. իր հազուադուր բոս կարի՝ պարզ ձև մ'ունէր. թեզ-նաւոր, նեղ, մորթէ վտառակ մ'էր, որուն վրայ՝ թէև 'ի ըսկզբան մաղերը մնացեր՝ բայց վերջէն շատ մը տեղերէ թափած լինելով՝ գծաւորին էր որոշել՝ քանի մը մազոտ մասերէն՝ թէ ո՞ր կենդանիին օգիկն էր։ Այս զգեստը վզէն մնաց և ծնկերը կը հասնէր և ամէն լաթի տեղ կ'բռնէր։ Վզնակին (collar) կողմէն լոկ զլուխ անցնելու չափ ծակ մը կար՝ որմէ կ'իմացէր թէ ուսերու վրայէն սահելով կ'հազնէր, նոր շաւիկի կամ հինօրեայ ձօշանի մը պէս։ Խոզի փոկերէ շինւած սահալներ իր ոտները կ'պահպանէին, նօսը կաշի երկունք սրունդները բոլորելով՝ մնաց և թամբերը կ'ենէին և՛ սկզբունք լեռնականացը պէս՝ ծունկերը մերկ կ'ընդունին։ Եւ որպէս զի վտառակը լաւ մը մարմինը զրկէ՝ մէջքէն լայն կաշիէ կամարով մը սեղմը և պղնձե օղակով մը կապեր էր։ Մէկ կողմէն առաջակ մը՝ միւս կողմէն փողով խոյի եղջիւր մը կախեր էր որ 'ի հարկին փչէ։ Նոյն կամարէն անցուցեր էր նաև երկայն, լայն, սքաժայր, երկսայրի դանակ մը՝ նոխազի կոթով մը՝ որ այն ժամանակն անդամ Շէֆֆիլտի նշանը կ'կրէր*։ Այս մարդը գլխուն վրայ խոյը չունէր. իր ոլորած գիւսակը միայն կ'պահպանէր զայն, մաղերն աւելուն տօթէն խանձեր՝ մութ կարմիր ժանդի գոյն աւեր էին, այնպէս որ իր երկար մօրուսին հետ գիմաստակեր մը կ'ընծա-

* Մինչև այսօր Շէֆֆիլտ երեւելի անուն ունի իր դանակներուն համար։

յէին, քանի որ մօրուքը դեղին կամ սաթի գոյն ունէր: Աւելորդ չէ նշանակել նաև հաղուստին այն մասն որ պղնձէ օղակ մէր, շան մը մանեկին նման, բայց ամենեւին ճեղք մը չուներ, այլ վզին կուռ փակեր էր՝ շունչ աւնլու չափ թոյլ, բայց այնքան նեղ որ անհնար էր զայն հանել առանց խարտոյի: Այս այլանդակ ճիսակին (gorget) վրայ՝ սաքսօն տառերով սա փորագրերը կար:

« — ԿԻՒՐԹ՝ ՈՐԳԻՒՄԻՆԻՍ, ՌՕԹԵՐՎՈՒՏ ԲՆԱԿՈՂ ՍԷՏՐԻԿԻՆ Ի ԾՆԷ ՍՏՐՈՒԿՆ Է (thrall) »:

Խողարածէն դատ, վասն զի Կիւրթի պաշտօնն այս էր: քըրմային ուրիշ ընկած քարի մը վրայ նստեր էր անձ մ'որ անորմէ շուրջ առա տարի պզտիկ կ'երևէր, և իր զգեստը՝ թէև ձևով ընկերներին նման՝ նիւթը լաւագոյն և սեպն սուելի այլանդակ էր: Իր շէկ վտաւակէն դատ՝ որուն վրայ անշահ նկարներ կային, կարճ վերարկու մ'ունէր՝ որ հազիւ մինչև զետուր կիսովին կը գոցեր. երեսը՝ թէև թերմաշ կարմիր չուխայ, պատտաւը փայլուն դեղին կտաւ էր, և որովհետև կրնար այս վերարկուն մէկ ուսէն միւսը տանիլ, և ըստ հաճոյս մարմինն անոր մէջ պլել, լայնքն աւելի մեծ էր քան երկայնքը՝ և հետևապէս անսովոր բան մը կ'երևէր: Արծաթէ նօսր բաղարաններ ունէր նա, և նոյն մետաղէ մանեակ մը սա վերնադրով:

« — ՎԱՄՊԱ՝ ՈՐԳԻՒՄԻՆԻՍ, ՌՕԹԵՐՎՈՒՏ ԲՆԱԿՈՂ ՍԷՏՐԻԿԻՆ ՍՏՐՈՒԿՆ Է »:

Այս գերին ալ իր ընկերին պէս սանդալներ հագեր էր, բայց՝ փոկի աեղ՝ իր սրունդը բարձրաններու մէջ աղուցեր էր, և մին կարմիր, միւսը դեղին էր: Ունէր նաև խոյր մ'որուն բոլորաիքը՝ բաղէներու կապածին նման՝ շատ բոժոժներ կախեր էին, այնպէս որ երբ զլուխը դէս ու դէն օրորէր՝ բոժոժները կ'հընչէին. և որովհետև մի և նոյն դրքին մէջ հազիւ թէ վայրկեան մը կ'նստէր՝ հնչիւնը զրեթէ անդու կ'լսէր: Սոյն խոյրին բոլորը կաշիէ կարծր կապ մը կար՝ որ դէպ 'ի կտտարը կը լայննար՝ թաղի ձև՝ մինչդեռ մէջ տեղէն երկար պարկ մ'երևելով՝ գիշերային գտակի կամ հետաքէ մը զլիւսադարէն պէս՝ մէկ ուսին վրայ ընկեր էր: Իր հաղուստին կերպը, բոժոժները, նոյնպէս քիչ մը խնդուկ, քիչ մ'ալ խորամանկ դէմքն ակն

յայտնի կ'ցուցնէին որ այս ստրուկը միմոս մը , խեղկատակ մ'էր ,
և այսպիսիներ մեծատուններու ապարանը կ'ընակին՝ որպէս զի
տաղտկալի երկար ժամեր զուարճութեամբ անցնելու անոնց օգ-
նեն : Այս ալ իր ընկերին պէս կամարէն կախած պարի մը
կ'կրէր , այլ ոչ շեփոր ունէր և ոչ դանակ , թերեւ անոր հա-
մար որ այս տեսակ մարդոց ձեռքը զէնք տալը վտանգաւոր կը
թուէր : Ուստի լոկ փայտէ թրով մը զինւեր էր , ինչպէս որ կը
զինւի մեր արգի թատրոններու մէջ խաղարկուն :

Այս երկու մարդոց կերպարանն այնքան տարբորոշ չէր որչափ
իրենց նայուածքն ու վարմունքը : Ախր թ տխուր ու դժնեայ դէմք
մ'ունէր , ակնարկը խորին վհատութեամբ գետին կ'սեւեռէր , և
թերեւ այս վհատութիւնն անհոգութիւն համարէր եթէ աստե՛ն
աստե՛ն իր հրալիր աչերէն ելած կայծը չյայտնէր թէ՛ իր վշտա-
հար յուսահատութեան ներքե՛ւ՝ բռնակրութեան զգացում մ'ու
գիմադրութեան իղձ մը պահած են : Իսկ Վամնյա՛ աննպատակ
հետաքրքրութիւն , անդուլ անհամբերութեան հայուած մ'ունէր ,
ինչպէս որ իր դասու մարդիկ սովորաբար ունին , հանդարտ կե-
նալ չգիտէր , և իր վիճակէն ու տեսքէն սաստիկ դժգոհ կ'երեւէր :

Այս երկու ընկերներն անկլօ-սաքսօն լեզուով կ'սօսակցէին
առանձին : — Ո՛ւր էր թէ սուրբ Վիթօլտի անէծքն այս դժո-
խային խոզերուն գլխին իջնէր — ըսաւ խոզսանը , իր շեփորը
փչելով ուժղին՝ որպէս զի ցիր ու ցան խոզերը հաւաքէ . և
թէ և ասոնք սոյն կոչումին ներդաշնակ ձայնով մը պատասխան
տւին , բայց բնաւ չէին արատրար խոզակի և բալուտի պարարտ
ինչոյքէն հեղանալու , կամ վտակին մօրուս ամերը թողու ,
ո՛ւր շատերը՝ կ'իսովին աղմի մէջ մաներ՝ հանդիսա ընկողմներ
էին՝ և իրենց պահնորդին ձայնին ականջ չէին կախեր : — Սուրբ
Վիթօլտի անէծքը թափի անոնց և իմ վրայ — կրկնեց Ախր թ
— եթէ մութը չկոխած դայլը մէկ քանի հաս չըրթէ չտանի ,
ես ալ մարդ չեմ : Արի՛ , եկուր Քանկս , Քանկս — զոչեց նա
բոլոր ուժովը՝ ձայն տալով դժուժ դայլանման շան մը՝ կէս
դամբու , կէս բարակ՝ (greyhound) որ չորս գին յասակըսելով
վաղեց հետա խոզերը ժողվելու , թէ և իրօք ասդիս անգին ցըր-
ւեց , և աիբովն օգնելու տեղ՝ տղխաութենէ կամ նենդութենէ
դործն աւրեց : — Սատանան խորտակէ սա շան ակուաները — ը-

սառ. Կիւրթ — և կրակ թափի այն Որսորդասրեան զլինն որ մեր շուներուն ճիրանները կտրելուն՝ այսպէս անճարակ կ'մնան* ։ Վամպա, ելիր քիչ մ'օգնէ ինձ, եթէ սիրտ ունիս. բլրակին չորս դին սլաոյս մ'ըրէ, խողերուն ճամբան կտրէ՝ և անոնց չափը տալէն ետեւ՝ առջեւ ձգէ ու զանոնք յառաջ քշէ հեղ գառնուկներու պէս ։

— Իրա՞նք ըսիր, սրտասխանեց Վամպա, տեղէն չշարժելով — այս մասին ոտքիս խորհուրդ հարցուցի, և ինձ միաբերան ըսին որ իմ վեհասպետական աստիճանիս անվայել դործ մ'է երթալ և սա սիրուն հանդերձս տղմին մէջ թաթմել։ Ուստի, կ'յորդորեմ քեզ, Կիւրթ, որ Ֆանկս շունդ կանչես՝ երամակդ իր զլինն ձգես, և ուր որ երթան, որո՞ց ձեռքն որ ընկնին, թէ զօրագնդի, թէ ելուզակի, թէ թափառիկ ուխտաւորի հանդիս պին, ուրիշ բան չեն կրնար լինիլ՝ այլ միայն նօրմաններ. այսպէս դու ալ մեծ նեղութենէ մը կ'ազատիս և հանդիստ կը դառնես ։

— Հանդիստ մի դառնեմ խողերը նօրման դառնալով — յարեց Կիւրթ։ — Ինչքեմ՝ այդ կէտը մեկնէ ինձ, Վամպա, վասն զի զլուխս հաստ է և միտքս շփոթ, չեմ կարող հանելուկ մը դառնել։

— Ա՜ս, ի՞նչ անուն կ'տաս այն խանչող անասնոց որ չորս ոտքով կ'բալեն — հարցուց Վամպա։

— Խո՞ղ, խող կ'անուանեմ, յիմար դու — սրտասխան տաւ խողարածը — խենդն անգամ այս բանս զիտէ։

— Բայց խող կ'ըսուի բուն սաքսօն լեզուով — յարեց միմսը — ըսէ ինձ թէ ինչպէս կ'կոչես այն վարադը զոր կ'մորթեն, կը ջարդեն և ոտքերէն դաւաճանի մը պէս կ'կախեն։

— Խողենի — սրտասխանեց խողարածը։

— Ես սղ կ'կրկնեմ՝ որ խենդն անգամ զիտէ — ըսաւ Վամսրա — թէ խողենի բառը նոյն իսկ Ֆրանքօ-նօրման է. այսինքն՝ երբ այս կենդանին կ'սպրի և բնիկ Սաքսօն ստրուկ մը զայն

* Ան ատենները՝ Նօրմաններու աշխարհակալութեան արդիւնք՝ անտառային խիստ օրէնքներ էային, որով երեք տարին անգամ մը շանց ճանկերը կ'իլէին որպէս զի աւատական իշխաններու երէին ետեւէն չվազէն. այս կանոնին հակառակ վարուող բնիկն երեք շիլին տուգանք կ'վճարէր։

կ'արածէ Սաքսօն անուանովը կ'կոչէի, բայց Նօրման կ'դառնաւ, և խողենի կ'անուանի երբ աղնուականաց սեղանը կ'մեծարւի. հիմակ ասոր ինչ կ'ըսես զու Կիւթ բարեկամս :

— Ճշմարիտ է խօսքդ, Վամպա. բայց քու թեթև խելապատակիդ մէջ ինչպէս ծնաւ այդ իմաստը :

— Ե՛հ, ուրիշ շատ մ'օրինակներ ալ կրնամ մէջ բերել — ըսաւ Վամպա նոյն ձայնով. ահա քեզ առհեսակալ Օսն (եղ) որ քեզի պէս ստրուկ եղած ատեն իր հին սաքսօն մականունը կ'պահէր, իսկ Պէֆ (կով), այսինքն կրակոտ Ֆրանսացի կ'դառնայ՝ երբ իր մեծարելի կլափներուն առջև կ'երևի՝ որոնք զինքը ծամելու և կլէլու պաշտօն ունին. նոյնպէս պարոն Քաֆ (որթ) պարոն Վ. կ'դառնայ. մէկ խօսքով սաքսօն է երբ արդարութիւն կ'պահանջէ, Նօրմանի անունը կ'առնու երբ զարձու թեան առարկայ մը կ'լինի :

— Սուրբ Տօստանի վրայ կ'երդնում — պատասխանեց Կիւրթ — որ զու ախուր Ճշմարտութիւններ կ'յայտնես : Մեր բռնաւորները լոկ շնչելու չափ օդ ձգեր են մեզ և այս ալ ակամայ շունորհեր են որ մեր կռնակին վրայ դրած բեռերը կրելու ոյժ ունենանք : Ամէն բանի ընտիրն ու պարարտն իրենց մատանին համար, ամէն բանի սիրունն իրենց մահճին համար է : Մեր ամենէն քաջ ու լաւ տանտէրներն իրենց օտար իշխաններուն զինուորներ կ'տան՝ որ ոսկորնին հեռաւոր երկիրներ կ'թողուն, և այս սեղ շատ քիչ քաջեր մնալով՝ կամք կամ ոյժ չունին ողորմելի սաքսօնները պաշտպանելու : Աստուած կեանք տայ մեր Սէտրիկ վարպետին, որ արիաբար մեզ պաշտպան կ'կենայ : Բայց կ'ըսեն թէ Բէժինալտ Ֆրօն-տը-Պէօ անձամբ մեր բնիկ երկիրը պիտի դայ եղեր, և քիչէն պիտի հասկցւի թէ որչափ անհոգ պիտի դիտէ Սէտրիկի նեղութիւնը : Եկէք, եկէք — զոչեց նա վերստին — հա՛, հա՛, կարիճ ֆանկս, քաջ է. խողերը առջևդ ձգեցիր, հիմակ առաջ քշէ նայիմ :

— Կիւրթ — ըսաւ միմոսը — զիտեմ որ զիս խնդի տեղ դրեր ես, կամ այնքան յանդուգն չես որ զլուխդ ճանկիս տակ բերես : Եթէ Բէժինալտ Ֆրօն-տը-Պէօն, կամ Ֆիլիպ Մալվուազէնի խօսք մը միայն ըսեմ և իմաց տամ որ դաւաճան մ'ես, անմիջապէս բանդ կ'բռնենի, կ'վռնուիս և սա ծառերուն մէջ

մէկուն վրայ կ'ընդունէր իբրեւ ահարկու խորտուկակ մ'այն չարա-
խօս մարդոց որ նախարարները կ'ըմբռնէին :

— Հո՛ւն — դռնէյ Աիւրթ — չէս մատներ զիս անշուշտ , քա-
նի որ քանքասանքի պատճառ տուողը գո՛ւ ես :

— Յս մատներ քեզ — պատասխանեց միմոտը — . այսպիսի
խաղ մ'իմաստունը միայն գիտէ խաղալ , յիմար մ'այդ հաշիւը
չկրնար ընել : Բայց լուռ , ո՞վ են եկողները — յարեց նա —
շատ մը ձիերու դափրը մտիկ ընելով , որ նոյն պահուն կ'լսէր :

— Ո՞վ որ կ'ուզէ թող լինի — պատասխանեց Աիւրթ , որ
նոյն միջոցին երամակը գումարեր , և Ֆանկս շան օղնութեամբը՝
դէպ' ի մեր նկարագրելու փորձած անտառին մուծ մէկ վայրը
քշելու վրայ էր :

— Բայց անհնար բան , պէտք է որ եկույ ձիաւորները տես-
նեմ — պատասխանեց Աամկա — կարելի է որ ձիւներու աշխարհ
հէն կ'դան և Օպրօն թաղաւորին կողմէն զիր մը կ'բերեն :

— Ըտտիկը տանի քեզ — վրայ բերաւ խողպանը — , ինչու
այդպէս կ'խօսիս , երբ քանի մը մղոն հեռու սոսկալի ամպրոպ
կ'լսուի և շանթաձիւք փոթորիկ մը պիտի բրզի : Մտիկ ըրէ ,
ինչպէս երկինք կ'որոտայ , և ես՝ ամառը՝ տեսած չէի բնաւ այս-
պիսի անձրեւի խոշոր կաթիլներ որ շիփ շիտակ վար թափին ,
նոյն իսկ կաղնիներն՝ թէեւ հով չկայ՝ կ'հեծեն , կ'շաչեն իրենց
լայն ոստերով և կարծես թէ մլրդիկը կ'աւետեն : Եթէ ուզես
խելքդ գլուխդ կ'ժողովես . անդամ մ'ալ խօսքիս միտ դիր , և
տուն դառնանք փոթորիկը մեզ չընած , վասն զի ահուկի պի-
տի լինի զիշերս :

Աամկա այս խօսքերուն ոյժն զգաց , և իր ընկերին հետը
գնաց . այս ալ ճամբայ ելաւ խոտին վրայէն երկձայր խոշոր
բիր մ'առնէն ետեւ : Այս երկրորդ եւմէն արտօրնօք անտառ
ռին մէկ ուղիէն յառաջ քալեց , Ֆանկսի օղնութեամբը քշե-
լով իր խորթաձայն երամակը :